# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ

(31 մայիսի - 22 հունիսի 2005 թ.)

Մայիսի 31-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հովվապետական այցով մեկնեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ: Սա Վեհափառ Հայրապետի երկրորդ Հովվապետական այցն է այս թեմ: Առաջինը տեղի էր ունեցել 2001 թ. մայիսին:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Տ. Գևորգ աբեղա Վահունին՝ որպես գավազանակիր, Տ. Կյուրեղ քահանա Դանեյանը, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը և օպերատոր Սուրեն Տեր-Գրիգորյանը: Լոս Անջելեսում Նորին Սրբության շքախմբին միացան նաև Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանը և «Տիգրան Մեծ» հրատարակչության տնօրեն Վրեժ Մարկոսյանը:

Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը Լոս Անջելես հասավ հունիսի 1-ին: Նորին Սրբությանը օդանավակայան դիմավորելու էին եկել ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Տ. Արսեն արքեպիսկոպոս Բերբերյանը, Արևմտյան թեմի հոգևորականները, Լոս Անջելեսում Հայաստանի գլխավոր հյուպատոս Գագիկ Կիրակոսյանը, թեմական խորհրդի և հայկական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օդանավակայանից Նորին Սրբության գլխավորած պատվիրակությունը առաջնորդվեց Փասադենայի «Ռից Քարլթոն» հյուրանոց, որի մուտքին Վեհափառ Հայրապետին էին սպասում մեծ թվով հավատացյալներ, որոնց օրհնության իր խոսքը ուղղեց Հայոց Հայրապետը:

Այնուհետև տեղի ունեցավ ընդունելություն հյուրանոցի հանդիսությունների սրահում, որի մուտքին Վեհափառ Հայրապետը օրհնեց ազգային տարազով աղջիկների կողմից մատուցված աղն ու հացը և «Հրաշափառ»-ով մուտք գործեց սրահ:

Հովնան Սրբազանը Արևմտյան թեմի հոգևորականության, թեմական խորհրդի և հավատացյալների կողմից բարիգալստյան խոսք ուղղեց Գարեգին Երկրորդին՝ ասելով, որ Նորին Սրբության հովվապետական օրհնաբեր այս երկրորդ այցելությունը հավատքի վերազարթոնքի մի նոր հզոր լիցք է լինելու հավատացյալների համար, և որ նրանք առավել պետք է ամրապնդեն իրենց սերը Մայր Աթոռի ու Հայրենիքի հանդեպ:

Այնուհետև հավաքվածներին իր պատգամն ուղղեց և նրանց Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի օրհնությունները փոխանցեց Հայոց Հայրապետը: Ապա տեղի ունեցավ համայնքային ընդունելություն ի պատիվ Նորին Սրբության:

**2 հունիսի**

Վեհափառ Հայրապետի առաջին հանդիպումը ամերիկաբնակ հավատավոր հայության հետ տեղի ունեցավ Կոստա Մեսայի Ս. Մարիամ հայկական եկեղեցում, որի հոգևոր հովիվն է Արժանապատիվ Տ. Մուշեղ ավագ քահանա Թաշճյանը: Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո հանդիսավոր կերպով մուտք գործեց եկեղեցի՝ ուղեկցությամբ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանի, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի և թեմի հոգևորականների:

Ամենայն Հայոց Հայրապետին հայ հավատացյալների հետ մեկտեղ դիմավորելու էին եկել նաև նահանգային իշխանության ներկայացուցիչները: Նրանց թվում էին Կոստա Մեսայի քաղաքապետ Ալան Մանսուրը, պատգամավոր Դանա Ռոհրաբաքերը, Նյուփորթ Բիչի քաղաքագլուխ Սթիվ Բրոմբերգը, Հրեշտակաց եկեղեցու հովիվ Արժանապատիվ Փիթր Հայնեսը և պաշտոնատար այլ անձինք:

Ընթացող եկեղեցական մեծաշուք արարողությունն ուղեկցվում էր եկեղեցու «Հովսեփյան» և «Ջվարթնոց» երգչախմբերի, ինչպես նաև Սան Դիեգոյի Ս. Սարգիս և Ս. Հովհաննես Կարապետ հայկական եկեղեցիների երգչախմբերի երգեցողությամբ:

Արարողության ավարտին Հովնան Սրբազանը բարի գալուստ մաղթեց Վեհափառ Հայրապետին՝ ասելով, որ հովվապետական այս այցելությամբ թեմի հավատավոր ժողովուրդը պետք է վերահաստատի իր ուխտը հանդեպ Հայոց Եկեղեցին ու Ս. Էջմիածինը: Հայոց Հայրապետին ուղղված բարիգալստյան խոսք ասացին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Մուշեղ ավագ քհն. Թաշճյանը, ծխական խորհրդի ատենապետ Արա Գարաբեշիշը, թեմական խորհրդի փոխատենապետ և այս եկեղեցու ծխական Վահրամ Պիրիճիքը: Այնուհետև Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց հավատացյալներին ու հորդորեց նրանց առաջնորդի գլխավորությամբ շարունակել իրենց նվիրյալ ծառայությունն Արևմտյան թեմին:

Վեհափառ Հայրապետը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրեց բարերար Արամ Բասենյանին և նրա տիկնոջը՝ Թերեզային, Կոստա Մեսայի ծխի հիմնադրության օրվանից ի վեր իրենց կատարած առատաձեռն բարերարությունների համար (տե՛ս «Էջմիածին», Ե, էջ 31):

Պարգևաբաշխությունից հետո բարերարը հայերենով և անգլերենով իր երախտագիտության խոսքն ասաց: Շնորհակալություն հայտնելով Հայոց Հայրապետին, թեմակալ առաջնորդին և եկեղեցու հոգևոր հովվին՝ պրն Բասենյանը իր խոսքը եզրափակեց՝ ասելով. «Վեհափառ Տեր, որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, կխոնարհիմ Ձեր առջև, որ այս պատվին արժանացուցիք զիս և մեր ընտանիքը»:

Ի հիշատակ այս հանդիպման, Վեհափառ Հայրապետը Կոստա Մեսայի ծխական համայնքին նվիրեց մեր պատմական վանքերը ներկայացնող մի կտավ:

Արարողությունից հետո տեղի ունեցավ Կոստա Մեսայի Ս. Մարիամ եկեղեցու կիրակնօրյա դպրոցի և ՀԲԸՄ շաբաթօրյա դպրոցի սաների կողմից կազմակերպված հանդիսություն, որն ուղեկցվեց գեղարվեստական գեղեցիկ հայտագրով:

**3 հունիսի**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Գլենդեյլի Մեմորիալ հիվանդանոց, որը 2001 թվականից սկսյալ համագործակցում է ինչպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, այնպես և Հայաստանի տարբեր բժշկական հաստատությունների հետ:

Նորին Սրբությանը այստեղ նախ ողջունեց տեղի հայ համայնքի և հիվանդանոցի կապերի պատասխանատու Վազրիկ Աբղեկյանը: Ապա հիվանդանոցի գործադիր տնօրեն Քաթրին Փելլին, ուրախություն հայտնելով Նորին Սրբության այցի առիթով, անդրադարձավ Հայաստանի տարբեր հաստատությունների և այս հիվանդանոցի միջև ձևավորված ջերմ հարաբերություններին:

Հանդիպման ավարտին հիվանդանոցի աշխատակիցներին իր օրհնության և գնահատանքի խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարձր գնահատելով նրանց աշխատանքը: Նորին Սրբությունը հատկապես անդրադարձավ հոգևորականների և բժիշկների առաքելության միջև եղած ընդհանրությանը՝ օգնել կարիքավորներին, հիվանդներին և կարոտյալներին: Հայոց Հայրապետը խոսեց նաև բժշկության ոլորտում Հայ Եկեղեցու կարևոր և գործուն ներկայության մասին ինչպես անցյալում, երբ դեռևս 4-րդ դարում Ներսես Ա Մեծ Հայրապետի ջանքերի շնորհիվ հիմնվեցին առաջին հիվանդանոցները, որբանոցները, այնպես և այսօր, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործում է «Ս. Ներսես Մեծ» հիվանդանոցը:

Այնուհետև Նորին Սրբությունը հիվանդանոցի աշխատակիցների ուղեկցությամբ այցելեց ինտենսիվ թերապիայի բաժանմունք՝ իր օրհնությունը բերելով այնտեղ գտնվող նորածին մանուկներին:

Այս հիվանդանոցում Ամենայն Հայոց Հայրապետը եղել էր նաև 2001 թ. ԱՄՆ Արևմտյան թեմ առաջին Հովվապետական այցի ընթացքում:

Վեհափառ Հայրապետը այնուհետև այցելեց ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան դպրոց, ուր հանդիսապետեց դպրոցական համալիրի նորակառույց «Սինանյան» մասնաշենքի բացման արարողությանը:

Այստեղ Վեհափառ Հայրապետին ողջույնի և բարիգալստյան խոսքով դիմեց այս հանդիպման հանդիսավար Լևոն Քեշիշյանը:

Դպրոցի աշակերտները ողջունեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հայրապետական մաղթանքի երգեցողությամբ: Դպրոցի տնօրեն տիար Հակոբ Հակոբյանը հանուն դպրոցի պաշտոնեության բարիգալստյան խոսք ուղղեց Նորին Սրբությանը՝ շնորհակալություն հայտնելով այս այցելության և նոր մասնաշենքի բացման արարողությունը նախագահելու համար: Աշակերտության անունից ողջույնի խոսք ասաց ուսանողական խորհրդի նախագահ Էրիկ Նահապետը: Հանդիպման ընթացքում ազգային-եկեղեցական երգերի կատարմամբ հանդես եկան դպրոցի երգչախմբի (ղեկավար՝ Արուս Անդրեասյան) սաները:

Վեհափառ Հայրապետը, օրհնելով հավաքվածներին և փոխանցելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունները, ուրախություն հայտնեց սաների հետ այս հանդիպման համար և շնորհավորեց նոր մասնաշենքի բացման առիթով՝ հորդորելով դպրոցի սաներին հավատարիմ մնալ ազգային արժեքներին և նախանձախնդիր՝ իրենց հայրերի հավատին: Նորին Սրբությունը նաև ասաց, որ երկար տարիներ ճանաչելով Սինան Սինանյանին, գի-





ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՀԻՎԱՆԴԱՑ. ԳԼԵՆԴԵՅԼ



ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ
ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԿԱԹՈԼԻԿ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ

տե, թե ինչ նախանձախնդրությամբ ու ոգևորությամբ է նա միշտ արտահայտվել այս վարժարանի հանդեպ և իր կարելին արել ու հետամուտ եղել, որ այստեղ ստեղծվեն ուսման համար լավագույն պայմանները, և որ այստեղ սովորողները կրթվեն և դաստիարակվեն որպես արժանավոր հայորդիներ: Հայոց Հայրապետը բարձրորեն գնահատեց և այն, որ այս վարժարանի ավարտական դասարանի աշակերտները ամեն տարի ուխտագնացությամբ լինում են Հայրենիքում և Ս. Էջմիածնում, ուր նրանց սիրով ընդունում է ինքը:

Հանդիպման վերջում կատարվեց դպրոցի նոր մասնաշենքի բացման հանդիսավոր արարողությունը: Այս վարժարանի տնօրենն է Հակոբ Հակոբյանը, իսկ խնամակալության ատենապետը՝ Սինան Սինանյանը: Վերջինիս Վեհափառ Հայրապետը նվիրեց Հայաստանը պատկերող մի գեղեցիկ բնանկար:

Երեկոյան ժամը 7-ին Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ԱՄՆ Արևմտյան թեմի Առաջնորդարանում հանդիպեց Հարավային Կալիֆոռնիայի շրջանի երիտասարդությանը: Երիտասարդական հավաքին ներկա էին թեմի տարբեր համայնքների երիտասարդաց միությունների, ինչպես նաև Լոս Անջելեսի շրջանի տարբեր համալսարաններում սովորողներին համախմբող Հայկական Ուսանողական Միության ներկայացուցիչները:

Հանդիպման ընթացքում ուսանողները իրենց հուզող և հետաքրքրող հարցերն ուղղեցին Վեհափառ Հայրապետին: Անդրադարձ եղավ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վարդապետությանը, Եկեղեցու կյանքում երիտասարդության դերին, Հայաստանում աղանդների քայքայիչ գործունեությանը, եվրոպական ինտեգրման համատեքստում Հայ Եկեղեցու գործունեությանը և այլ խնդիրների:

Վեհափառ Հայրապետը այս համատեքստում ընդգծելով հավատի և լեզվի կարևորությունը մեր հոգևոր-ազգային կյանքում, ասաց, որ եթե մենք չպահենք ու չպահպանենք այդ երկու սրբությունները հայ կյանքից ներս, ապա կկորցնենք մեր ազգային-հոգևոր ինքնությունը՝ կուլ գնալով օտարացումի և ուծացման ալիքներին:

Ուրախություն հայտնելով հանդիպման համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց երիտասարդությանը՝ գործուն կերպով մասնակից լինել Եկեղեցու կյանքին՝ կոչ անելով շաղկապված մնալ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և զորացնել կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայրենիքի հետ:

**4 հունիսի**

Առավոտյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակությունը այցելեց «Գալայճյան» սրահ՝ ծանոթանալով համայնքային կյանքին և եկեղեցու կառուցման աշխատանքներին: Այստեղ Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց հիմնարկեքի կազմակերպչական աշխատանքների պատասխանատու և թեմի բարերարներից Անդրանիկ Զորայանը: Այնուհետև, ժամը 10-ին, Հայրապետական թափորն ուղղվեց այն վայրը, ուր կառուցվելու է տաճարը: Նորին Սրբությունը կատարեց հիմքերի քարերի օրհնության արարողությունը: Ապա քարերը տեղադրվեցին տաճարի հիմքերում:

Առաջնորդանիստ տաճարը կառուցվում է տեր և տիկ. Ջեք Գալայճյանների, տիկ. Էլեանոր Տիգրանյանի, տեր և տիկ. Արմեն Համբարների, պրն. Քըրք Քըրքորյանի, պրն Վարնում Պողոսի, տիկ. Սյու Պողոսի, տեր և տիկ. Ջոն Կճոյանների, պրն Ջորջ Նորոյանի, տեր

և փիկ. Վալտեր Քարաբյանի, տեր և տիկ. Ջորջ Դունայանների, տեր և տիկ. Անդրանիկ Ջորայանների, տեր և տիկ. Պետրոս Տաղլյանների, տեր և տիկ. Պետրոս Օրունքաքչեմի, տեր և տիկ. Հարութ Աղա-Մարգսյանների, տիկ. Ջաբել Քեֆեսճյանի, տեր և տիկ. Ալբերտ Բոյաջյանի, տեր և տիկ. Կարապետ Ագբուլաթի, տեր և տիկ. Վարդգես Պարսամների, տեր և տիկ. Լևոն Գարագաշյանների, տեր և տիկ. Նշան Բլիկյանների, տեր և տիկ. Ջեյմ Մելիք-յանների, տեր և տիկ. Առնոլդ Ղազարյանների, տեր և տիկ. Նշան Տերտերյանների, Վարուժան սրկ. Ալթըբարմաքյանի և նրա կնոջ, Սարգիս սրկ. Մերոբյանի, տեր և տիկ. Քըրք Քենսաբյանների, տեր և տիկ. Օնիկ Մեհրաբյանների, պրն Ջոն Սթիվենսի, տեր և տիկ. Արմանդ Արաբյանի, տեր և տիկ. Ռիչարդ Մուշեղյանի, պրն. Ջաք Դուլգերյանի, տիկ. Անահիտ Ավետիսյանի, տեր և տիկ. Այդին Բեդիգօղլուի, տեր և տիկ. Հերման Հինթիրյանների, տեր և տիկ. Մելիք Հովսեփյանների, տեր և տիկ. Ալան Յաղջյանների, տեր և տիկ. Էդ Քաշյանների, տեր և տիկ. Սարո Մարուքյանների, տեր և տիկ. Ռաֆֆի Մարուքյանների, տեր և տիկ. Էդդի Սարաֆօղլուի, տեր և տիկ. Արա Դավիթյանի, դոկտ. Ավետիս Դավիթյանի, տիկ. Արշալուսի Դավիթյանի, տեր և տիկ. Միսակ Նազարյանների, տեր և տիկ. Քեննեթ Նորյանների, տեր և տիկ. Գրիգոր Չերկոյանների ու տեր և տիկ. Վահրամ Պիրիչիկի ազնիվ բարերարությամբ:

Հիմնարկերքի ընթացքում Վեհափառ Հայրապետը օծեց այս բարերարների՝ որպես Եկեղեցու կնքահայրերի ձեռքում պահված խաչքարը: Օծման ընթացքում, երբ Նորին Սրբությունը սկսեց երգել «Առաքելոյ աղաւնոյ» շարականը, երկինք բաց թողնվեցին մի քանի փասնյակ աղավնիներ:

Հավարտ արարողության, հանուն ողջ Արևմտյան թեմի, առաջնորդ Հովնան Սրբազանն իր երախտագիտությունը հայտնեց եկեղեցանվեր բարերարներին՝ իրենց նվիրատվության համար, որով հնարավոր դարձավ իրագործել թեմի հավատացյալների վաղեմի երազանքը՝ առաջնորդանիստ տաճարի կառուցումը: Սրբազան Հայրը նաև շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր օրհնաբեր աջով հիմնարկեքի արարողությունը հանդիսապետելու համար: Հովնան Սրբազանը իր խոսքում ի մասնավորի ասաց. *«Հայ Առաքելական Եկեղեցվո կյանքի մեջ և հայկապես Նյուխույնն Ամերիկայի Արևմտյան թեմի կյանքեն ներս պատմական բացառիկ նշանակություն ունեցող օր մըն է բոլորիս համար, երբ Ձեր ներկայությամբ Դուք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն և Մայր Հայրենիքեն կբերեք աստվածային օրհնություն, մեր հայրերուն քրիստոնեական հավատքեն նոր ճառագայթում մը, որ իրականացած է մեր հայրերու ապրված հավատքով: Յուրաքանչյուրիս հոգու մեջ Դուք նաև կարմատավորեք քրիստոնեական հավատքի սիրո նոր զգացողություն մը դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որը հրաշալի այն ոսկե կամուրջն է, որ հարաժամորեն մեր նախնյաց կյանքը տարած է դեպի Սուրբ Աստված և Մայր Տաճարին այս հիմնարկեքին Ձերդ Սրբության ներկայությամբ և օրհնությամբ այս նույն տեսիլքը և ոգին և հավատքի կորովն ու եռանդը այսօր անպարակույս կդառնա նաև մեր հոգու լիցքը և մեր հավատքի գիտակցությունը:*

*Մենք ուրախ ենք, որ Արևմտյան թեմի Մայր Տաճարի կառուցման աշխատանքը, որը սկիզբ կառնե խորհրդապես այսօր, կօրհնվի Վեհափառ Հայրապետի*

*օրհնությամբ, և Հայոց Հայրապետն է ներկա այստեղ, Սուրբ Էջմիածինը ներկա է, և Հայոց Հայրապետը իր օրհնությունը կբաշխե: Սուրբ Էջմիածնեն պատգամ ճառագայթում է, որ կներարկվի մեր հոգիներու մեջ, հոգևորականության հրավիրելով մեզմե յուրաքանչյուրը, որպեսզի արթնանաք և ամուր պահենք քրիստոնեական հավատքը, որ կռվանն է և հաստատուն հիմն է նաև մեր կյանքի, մեր առօրյա կյանքի, և այդ նույն հոգևոր ուժականությամբ մենք մեր մեջ գտնենք նաև աստվածային այդ զորությունը՝ իմաստավորելու աստվածապարգև մեր կյանքը:*

*Վեհափառ Տեր, անցնող քանի մը ամիսներու ընթացքին մինչ Ձեր հովվապետական այցելությունը այստեղ՝ այս թեմին, մենք անընդհատ հայրաբարեցինք, որ հայրապետական այս երկրորդ այցելությունը պիտի խորհրդանշե հավատքի վերազարթոնք մեր Եկեղեցվո կյանքին մեջ, որուն ապրող բջիջներն են մեր ժողովրդի զավակները: Տարակույս չկա, որ այս օրհնությամբ մեր թեմական կյանքին ներս նոր թափ և երանգ պիտի ստանա ոչ միայն եկեղեցաշինությունը, այլ նաև քրիստոնեական հոգևոր դաստիարակչական առաքելությունը շնորհիվ մեր թեմի եկեղեցականաց դասի, թեմական խորհուրդի պատկան իշխանություններու և համագործակից ներկայությամբ մեր հավատացյալ ժողովուրդին:*

*Այսօրվա սրբազան արարողությունը՝ հիմնաքարերու օրհնությունը, միայն մարտահրավեր մըն է, որպեսզի մենք շարունակենք աստվածապարգև մեր կյանքը տեսիլքով և հավատքով: Այս առիթով, Վեհափառ Հայրապետ, հանուն թեմական խորհուրդի, թեմի հավատացելոց, թե՛ հոգևորականաց դասի և թե՛ հավատացյալ ժողովուրդի, բարի գալուստ կմաղթենք Ձեզ և մեր երախտագիտությունը կուզենք հայտնել, որ Դուք անձնապես ներկա գտնվեցաք և կատարեցաք այս օրհնությունը: Այս սրբազան առաքելությունը ճանապարհ եղավ և Աստծո կամքով, երբ ժամանակը գա, Դուք պիտի գաք, Վեհափառ Հայրապետ, և Մայր Տաճարը Դուք պիտի օծեք՝Աստծո փառքին և մեր Սուրբ Եկեղեցու առավել զորացման համար:*

*Ինչքան ուրախ են մեր սրտերը, որ պատմական այս օրվա առիթով մեզի հետ են բարձրաստիճան եկեղեցականներ: Ուրախ ենք, որ Մայր Տաճարի տեսիլքը, որ տարիներ շարունակ եղած էր և տեսիլքը թեմիս նախկին առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչե Սրբազանին, այսօր ճանապարհ կելլա այս տեսիլքը, և այս տեսիլքը գործնականացնողները մենք կըլլանք՝հոգևորականներ և աշխարհական ներկայացուցիչները այս թեմին»:*

Ապա Հովնան Սրբազանը հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ իր Հայրապետական օրհնությունը բաշխելու համախումբ հավատացյալներին:

Շնորհավորելով առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանին, թեմական խորհրդին, բարերարներին և թեմի հավատացյալներին սրբազան արարողության առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուրախություն հայտնեց թեմում իրագործվող բազում ձեռնարկների, նոր եկեղեցիների և հատկապես առաջնորդանիստ եկեղեցու կառուցման առիթով: Վեհափառ Հայրապետը վստահությամբ նշեց, որ այս փաճարը, որպես հոգևոր կենտրոն և աղոթքի տուն, իր շուրջը կհամախմբի թեմի բոլոր հավատացյալներին:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

*Սա է դուռն երկնից, արդարոց հանգիստ,*
*Մեղաւորաց քաւարան, Քրիստոսի արքայարան,*
*Հրեշտակաց բնակարան, սրբոց ժողովարան,*
*Տեղի ապաւինի և տուն Աստուծոյ:*

Ղազար Ա Ջահկեցի

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն փառաբանելով այսօրվա Մեր աղոթքներում Մենք կատարեցինք վեմ-քարերի օրհնությունը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդանիստ Մայր Տաճարի: Հոգևոր ուրախության առանձնակի զգացումով ողջունում ենք մեր հոգևորականաց, ինչպես և քույր Եկեղեցիների ու Կալիֆոռնիո նահանգի պետական այրերի ներկայացուցիչներին: Մենք փառք և գոհություն ենք առ Աստված բարձրացնում, որ Տերը նշանավորեց հայրապետական Մեր երկրորդ այցը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ հիմքի արկանումով առաջնորդանիստ Մայր եկեղեցու:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, բարձրացնենք մեր աղոթքը երկինք մեր Տիրոջ և Փրկչի առջև՝ հայցելով բարեխոսությունը հավատքի մեր Հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի, ով իր օրհնյալ աջով բազում սրբատեղիներ հաստատելով մեր Հայրենիքի նվիրական հողում փրկագործ խաչը հաղթականորեն պարզեց հայոց կյանքում: Եկեղեցին ճանաչեցինք երկնքի դուռ, արդարների հանգստարան, մեղավորների քավարան, Քրիստոսի արքայարան, հրեշտակաց բնակարան, սրբերի ժողովարան, ապավինության վայր և Աստուծո տուն:

Անհավասիկ այս հավատքով մեր հայրերը դարեր շարունակ եկեղեցիներ ու վանքեր են կառուցել՝ առ Աստված իրենց սերը և իրենց արյուն-քրտինքը շաղախ դարձնելով Աստուծո տաճարների և սրբարանների կառուցման նվիրական գործին: Որպես ազգ աշխարհասփյուռ, կառուցել ենք և՛ Հայրենիքում, և՛ Հայրենիքից դուրս, մոտ և հեռու հայկական բոլոր գաղթօջախներում, ուր որ հաստատվել է մեր ժողովուրդը դառն ճակատագրի բերումով:

Սեփական տուն կառուցելու հետ ձեռնամուխ ենք եղել Աստուծո տան շինությանը, քանզի հավատացել ենք, որ մեր Եկեղեցին ծննդավայրն է հայ հոգու, մեր հոգևոր ազգային ինքնության աներեր սյունը, անառիկ ամրոցը ազգիս, մեր փրկության փարատողն ու երջանկության ճանապարհը և հույսի ապավենը: Եկեղեցին նաև մեր ազգային ամբողջականության հոգևոր մարմնացումն է, հոգևոր մեր Հայրենիքը, մեկ ու միասնական աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում:

Սիրելի բարեպաշտ զավակներ Մեր, այս հավատքով ու տեսիլքով, ինչպես և ձեր սիրով ու նվիրումով այսօր հիմնարկվում է Միացյալ Նահանգաց հայոց Արևմտյան թեմի առաջնորդանիստ Մայր եկեղեցին, որպեսզի Միացյալ Նահանգների այս շեն

ու բարօր կյանքի ճանապարհներին վառ պահվի Լուսավորչի կանթեղի լույսը ձեր հոգիներում: Աստուծո զորությամբ և օրհնությամբ թող ամրանա, հաստատուն դառնա հավատավոր ձեր ընթացքը և պայծառություն հավելի ձեր թեմական կյանքին և մեր Առաքելական Մայր Եկեղեցու նվիրական առաքելությանը:

Երանի՛ նրանց, ովքեր իրենց վաստակի ու քրտինքի արդար կաթիլն են միախառնում Աստուծո սուրբ տաճարի՝ հայոց աղոթքի այս տան կառուցմանը:

Երանի՛ եկեղեցի շինողաց.

Այս մաղթանքն է այս պահին հնչում մեր շուրթերից, այս մաղթանքը հնչել է և դարեր շարունակ մեր եկեղեցականաց և ժողովրդի հոգում ամեն անգամ, երբ նրանք ձեռնամուխ են եղել Աստուծո տուն եղող նվիրական սրբազան տաճար կառուցելու գործին: Արդարև, երանի է ձեզ, հավատավոր, սիրելի հայորդիք, որ հավատքի ձեր ուղին այս նույն բարի օրինակով զարդարում եք այսօր եկեղեցաշինությամբ՝ արժանի դառնալով երկնավոր մեր Տիրոջ օրհնությանը և մեր հայրերի գնահատանքին, ինչպես նաև սերունդների օրհնությանը, որոնք պիտի գան հպարտ զգացումով իրենց խոնարհումը բերելու ձեզ և աղոթք երկինք բարձրացնելու ձեզ համար, ինչպես այսօր Մենք աղոթում ենք մեր նախնյաց սուրբ հիշատակների համար:

Բյուրենի առաջնորդանիստ այս տաճարի հիմերի վրա, որոնք Սրբալույս Մյուռոնով այսօր օծեցինք, շուտով պետք է վեր խոյանա եկեղեցին և իր լույսով պիտի կամրջվի Սուրբ Էջմիածնի և աշխարհի բյուր մեր եկեղեցիների հետ, նորոգելով ու զորացնելով ազգային եկեղեցական ձեր կյանքը՝ խարսխված Ավետարանի սուրբ պատգամների, մեր սուրբ հայրերի ժառանգության ու հայրենական ավանդների վրա:

Մենք հիմերը դրեցինք ուխտի Սուրբ Սեղանի, որի առջև պիտի գաք ձեր հարատև ուխտը վերանորոգելու հանդեպ ձեր հայրերի սուրբ հավատքը, ձեր ուխտը վերանորոգելու առաջի Աստուծո, որպեսզի լինեք ու մնաք Աստուծո հարազատ, Աստուծո հավատարիմ զավակներ ու ժողովուրդ՝ կրկնելով մեր հայրերի այն վկայությունը հավատքի իրենց նվիրումի, թե Եկեղեցին մենք ունենք մեզ որպես հայր և մեր լույս հավատքից ոչ ոք կարող է մեզ բաժանել, ո՛չ հրեշտակք և ո՛չ մարդիկ և ո՛չ մեր կյանքին բաժին ընկած որևէ դառն հարված:

Նորակառույց այս սուրբ եկեղեցին մշտալույս հուշարարը պիտի լինի ձեզ, որ նվիրական պարտք ունեք Աստուծո, Հայրենիքի և սերունդների առջև: Պարտք ունեք շարունակելու ձեր ջանքերն ու եռանդը ներդնել հայրենյաց մեր կյանքի շինության համար, Հայաստանի ու Արցախի ազատ կյանքի ու առաջընթացի համար:

Մենք, սիրելի բարեպաշտ զավակներ, տեսել ենք ձեր հավատքը և ձեր նվիրումը, զգացել ենք նաև ձեր հոգու ջերմությունը հանդեպ Հայրենիքն ու ազատագրված Արցախ մեր նվիրական աշխարհը, հանդեպ ձեր եղբայրներն ու քույրերը հայրենաբնակ: Ձեր հավատը, սերը և նվիրումի լավագույն արտահայտության, լավագույն դրսևորման վկան մենք եղանք ամիսներ առաջ, երբ աշխարհասփյուռ ողջ հայությունը, այդ թվում և դուք, կազմակերպեցիք հանգանակություն ի սեր արցախահա-

յության և կարևոր ձեր ներդրումը կապարեցիք Արցախի վերաշինության նվիրական գործին:

Սիրեցյալ զավակներ Մեր, արթուն պահեցեք եկեղեցասիրության և ազգանվիրումի ձեր ոգին: Այս է Մեր հայրական հորդորը ձեզ և հայրապետական պատգամը: Համապատում և վստահ քայլերով մուտք գործեք արքայության դռները ձեր առջև բացող հայոց Սուրբ Եկեղեցին, որը զորություն պիտի տա ամենքիս՝ պայքարելու հարափոփոխ ժամանակների տարբեր մարտահրավերների դեմ և հավատարիմ մնալու հայի ինքնությանը, լուսավորչակերտ հայոց հավատքին: Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որպեսզի Տերը ամուր պահի ձեր հավատքը և ձեր նախանձախնդրությունը՝ հեռավոր Ամերիկայի ափերում շեն ու պայծառ պահելու մեր եկեղեցիները:

Մենք Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Մեր բարերար զավակներին, ովքեր այսօր դարձան կնքահայրը այս եկեղեցու կառուցման սուրբ գործի, Մեր գնահատանքը քաջեռանդ թեմակալ առաջնորդ Հովնան Սրբազանին, որպեսզի նրա ղեկավարությամբ բազմապատկեք եկեղեցաշեն ու հայրենաշեն ձեր իրագործումները ու նաև ձեր աղոթքներով խաղաղ ու հզոր դարձնենք մեր Հայրենիքը և բարօր ու առաջագնաց մեր ժողովրդի կյանքը ի փառս Աստուծո, ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և ի շինություն հայրենի մեր երկրի և հայոց կյանքի:

*Շնորհը, սերը և խաղաղությունը մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի թող լինեն մեզ հետ այժմ և հավիտյանս. ամեն:*

Հիմնօրհնեքի արարողությանը ներկա էին Կալիֆոռնիայի նահանգապետի գրասենյակի փոխտնօրեն Լիզա Գալուստյանը, Գլենդելի քաղաքային խորհրդի անդամներ Բոբ Յոսեֆյանը եւ Ֆրենկ Քինտերոն, կոնգրեսական Ադամ Սքիֆը, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, ինչպես նաև քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, ՀՀ գլխավոր հյուպատոս Գագիկ Կիրակոսյանը:

Հավարտ արարողության Վեհափառ Հայրապետը կապարեց նաև «Փոլ եղբայրներ» դահլիճի օրհնությունը:

Կեսօրին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Բևերլի Հիլզում գտնվող ՀՀ հյուպատոսարան: Նորին Սրբությանն ուղեկցում էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Տ. Վիգեն եպս. Այգազյանը և այլ եկեղեցականներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին և հայրապետական շքախմբի անդամներին ընդունեց ԱՄՆ-ում Հայաստանի գլխավոր հյուպատոս Գագիկ Կիրակոսյանը: Իր ջերմ խոսքում Հյուպատոսն անդրադարձավ Ամենայն Հայոց Հայրապետի կողմից գործադրված ջանքերին՝ ուղղված Հայաստանի բարգավաճմանն ու բարօրությանը:

Նորին Սրբությունը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով ներկաներին, իր գնահատանքը հայտնեց հյուպատոսությանը և Կալիֆոռնիայի հայ համայնքին այն նվիրյալ ծառայության համար, որ ցուցաբերում են Հայրենիքի հանդեպ, և հյուպատոսարանին նվիրեց Հայաստանը պատկերող մի կտավ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծանոթացավ հյուպատոսության գործունեությանը և ծրագրերին:

Նույն օրը, երեկոյան ժամը 18.30-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի ընդունելություն էր կազմակերպվել «Մենչրի Պլազա» հյուրանոցում: Հանդիսությունը սկսվեց ԱՄՆ և Հայաստանի Հանրապետության օրհներգերով, որոնք կատարեցին Կարինե Մուշեղյանը և Էլիզ Թաշճյանը:

Բացման և Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսքով դիմեց Լիլի Պալյանը: Երեկոն վարում էր իրավաբան Ժոզեֆ Կանիմյանը:

Երեկոյի ընթացքում խոսք ասացին Լոս Անջելեսի վարչական պատասխանատուներից Մայքլ Անտոնովիչը, Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, կոնգրեսմեն Բրեդ Շերմնը, որը Վեհափառին նվիրեց նաև ԱՄՆ դրոշը: Թեմի անունից խոսք ասաց թեմակալ առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը:

Այնուհետև ցուցադրվեց Մայր Աթոռի գործունեությունը բնագավառ առ բնագավառ ներկայացնող մի վավերագրական ֆիլմ, շնորհիվ որի սրահում հավաքվածները ծանոթացան և խանդավառվեցին Հայրենիքում ծավալված եկեղեցաշինությամբ, նոր հոգևորականների ձեռնադրությամբ, հոգևոր քարոզչությամբ և իրականացվող սոցիալական բնույթի տարբեր տնտեսական ծրագրերով:

Հովվապետական այս այցելության առիթով Սարո և Ռաֆֆի Մարույան եղբայրները Ամենայն Հայոց Կաթողիկոսին նվիրեցին ադամանդներով զարդարված Հայրապետական ոսկյա մի արծիվ: Հայրապետական արծիվը Հայոց Կաթողիկոսները կրում են որպես Հայրապետական իշխանության խորհրդանիշ:

Հանդիսության գեղարվեստական հայտագիրը ներկայացրեցին «Փոքրիկ հրեշտակներ» (little Angels) դպրոցի մանկահասակ աշակերտները՝ մեծ հիացմունք պատճառելով ներկաներին: Այնուհետև երաժշտական տարբեր համարների կատարմամբ հանդես եկան տեղի Մազմանյան ընտանիքի անդամները: Ապա ներկաներին իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը:

**5 հունիսի**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ և անմահ Պատարագ մատուցեց Հրեշտակաց մեր Տիրուհի (Our lady of Angeles) կաթոլիկ Մայր տաճարում: Ամփոփվանու ներքո Նորին Սրբությունը թեմի եկեղեցականներից և քույր Եկեղեցիների ներկայացուցիչներից կազմված հանդիսավոր թափորով մուտք գործեց տաճար: Ավելի քան կես ժամ տևեց Վեհափառի՝ տաճար մուտք գործելը, քանի որ բազմահազար ամերիկահայեր էին խռնվել ընթացող թափորի ճանապարհին, որպեսզի ստանան Հայոց Հայրապետի օրհնությունը: Թափորին մասնակցեցին նաև ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը, ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը, Տ. Վիգեն եպս. Այքազյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը:

Ս. Պատարագի ընթացքում Նորին Սրբությանը սպասավորում էին Հովնան և Խաժակ Սրբազանները:

Ս. Պատարագի երգեցողությունը կատարվեց Արևմտյան թեմի երգչախմբերից կազմված 120 հոգանոց միացյալ երգչախմբի կողմից:

Արարողությանը ներկա էին թեմի եկեղեցականներ ու հավատացյալներ, շուրջ փասը Եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ գլխավորությամբ Լոս Անջելեսի կաթոլիկ թեմի արքեպիսկոպոս, կարդինալ Ռոջեր Մահոնիի, ինչպես նաև Գլենդելի քաղաքապետ՝ Րաֆֆի Մանուկյանը, ՀՀ գլխավոր հյուպատոս Գագիկ Կիրակոսյանը:

Ս. Պատարագի ընթացքում թեմակալ առաջնորդ Հովնան Սրբազանը, ողջունելով Վեհափառ Հայրապետին, ուրախությամբ նշեց, որ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալության շրջանում առավել է զորացել Մայր Եկեղեցու կապը աշխարհասփյուռ հայության հետ:

Այնուհետև Հայրապետական իր պատգամը ներկաներին ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ փոխանցելով հայոց հավատքի օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունները: Վեհափառ Հայրապետը հորդորեց հայորդիներին՝ նորոգել իրենց հոգիներում քրիստոնեական հավատը և սերը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

***«Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք***
***զսէրն Աստուծոյ, զոր ունի առ մեզ»:***
**(Ա Յովհ. Դ 16)**

**Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, ուրախ ենք անսահման և գոհություն ենք մատուցում Աստծուն, որ վերստին առաջնորդեց Մեզ դեպի ձեզ, և, արդ, այսօր այս սրբազան փաճարում մենք միասնաբար աղոթք ենք բարձրացնում դեպ երկինք: Լույս և օրհնություն ենք բերել ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, սերն ու ողջույնները Մայր Հայաստանից, հայրենաբնակ ձեր եղբայրներից և քույրերից: Հայոց Հայրապետիս համար մխիթարություն է տեսնել ձեզ այստեղ այսպես համախումբ, հավատքով խանդավառ ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ հավատարմությամբ լեցուն:**

**Դուք, ձեր հայրերն ու պապերը հավատն ու սերը ունեցաք ձեր գործերին գործակից և ձեր գործերով էլ հաստատվեց ու զորացավ ձեր հավատքը: Այսպես ապրեց ամենուր մեր ժողովուրդը, քանզի հավատաց ու ճանաչեց սերն Աստուծո, որ ունի առ մարդը: Հավատարույր և հայրենաշունչ ձեր կյանքով քաջալեր՝ այսօր հպարտությամբ կրկնում եք առաքյալի խոսքը. «Քանզի ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն,**

կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ի Նորա գալստեանն, զի դուք էք փառք մեր եւ խնդութիւն» (Ա Թեսաղ. Բ 19-20):

Չեզանով և աշխարհասփյուռ համայն մեր ժողովրդով է կազմվում և ամբողջանում մեր Սուրբ Եկեղեցին: Կանք և պիտի մնանք Քրիստոսի ժողովուրդ, Քրիստոսի Սուրբ Եկեղեցին, ժառանգություն Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների, Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ մեր հավատի Հոր: Այսպես իբրև ժառանգություն կոչեց մեզ Աստված, պահպանեց ու հասցրեց նոր դարի լույսին, նոր ժամանակների առաքելությանը, ազգերի հետ քայլելու, հուսալու և աղոթելու, որ Տիրոջ ամենառատ ողորմության ու շնորհների ներքո այս աշխարհի մեջ իրականություն դառնա խաղաղությունն ու ի մարդիկ հաճությունը և ծաղկի հավատքը՝ ապրելու աստվածային սիրո պատգամով:

*Եւ մեք հաւատացաք և ծանեաք զսէրն Աստուծոյ, զոր ունի առ մեզ.*

Անդարձ հավատաց մեր ժողովուրդը աշխարհին բացված փրկության հույսին ու հարության Ավետարանին և քրիստոնեական հավատքը առաջինը աշխարհում 301 թվականին պատմականորեն հռչակելու շնորհընկալը եղավ: Վստահեց ու ապավինեց կյանքը դեպի բարին, ճշմարիտն ու արդարը և երջանիկը առաջնորդող լուսաշող ճանապարհին: Եվ Աստուծո օրհնությունը բյուրապատիկ իջավ հայ կյանքին: Աստված պարգևեց մեզ Սուրբ Էջմիածինը, որտեղ մեր ժողովուրդը միշտ տեսավ էջքը Քրիստոսի, Աստուծո սերը՝ Իր անսպառ զորությամբ, որով Սուրբ Էջմիածինը դարձավ Հայոց աշխարհի ու աշխարհասփյուռ հայության համար համազգային նվիրական տուն, հոգևոր կյանքի լույսի խորան:

Աստված պարգևեց մեզ հանճարագործ Մեսրոպյան գիրը, որի 1600-ամյա հոբելյանը տոնախմբեցինք այս տարի ցնծությամբ ու փառաբանական ոգով: Ոսկեղենիկ մեր տառերը սնեցին ու աճեցրին մարդկության սիրո և ստեղծագործելու Թարգմանչաց ոգին, հայրենյանց պաշտպան անխախտ ոգին Վարդանանց: Հայացքն ուղղած դեպի շնորհով բացված երկինքը, մեր ժողովուրդը Արարատի փեշերին սփռված իր երկրում վանք ու դպրոց հաստատեց, մատյաններ ծաղկեց, կառուցեց ու հաց արարեց: Առ Փրկիչը սիրով մեր ժողովուրդը զորացյալ պահեց հավատարմությունը իր հողին, ազատության սերը, արարումի ու վերածննդի ոգին:

Դարերի մեջ մեր ժողովուրդը հաճախ ստիպված եղավ պաշտպանել մեր հայրենիքը, քրիստոնեական իր հավատքը և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Հաճախ մահը գերադասեց, բայց չուրացավ Քրիստոսին: Եվ Քրիստոս՝ մեր Տերը, փրկեց մեզ բազմաթիվ մահերից, դուրս բերեց մեզ մեզ համար փորված գերեզմաններից: Պահպանեց աշխարհասփյուռ ու միավորեց աստվածակառույց Սուրբ Էջմիածնից ճառագող հավատքի լույսով, Սուրբ Էջմիածնի հովանյալ թևերի ներքո: Այսօր, սիրելիներ, Սուրբ Էջմիածնի օրհնությունն եմ բերել, որպեսզի այս օրհնության հովանու ներքո շարունակեք աստվածահաճո և հայրենանվեր կյանքը ձեր հեռավոր ափերում Կալիֆոռնիայի:

Հիրավի, մեր պատմությունը փորձությունների ու դժվարությունների պատմու-
թյուն է, բայց նաև հերոսացումի, ստեղծումի, ստեղծելով նվաճումի և ստեղծելով
հաղթելու պատմություն: Ոգու ու նվիրումի, աստվածային սիրո ապրումի պատմու-
թյուն է, փառքերի պատմություն, բայց մանավանդ Աստված փառաբանություն,
քրիստոնեական մեր հավատքին հավատարմության պատմություն, որը շարունակ-
վելու է հավաստելով ու վկայելով, որ մեր ժողովուրդը հարուցյալ Քրիստոսին հա-
վատացող է:

Քրիստոս հարություն պարգևեց մեր ժողովրդին Գողգոթայի ճանապարհներին
ցեղասպանության, որի իննսունամյա տարելիցն ենք հիշատակում այս տարի: Աղե-
տալի ու ողբերգական, օրհասական այդ տարիներին հերոսական մաքառումով մեր
ժողովուրդը վերահաստատեց իր պետական անկախությունը հայրենի հողի մի
հատվածի վրա՝ շաղկապելով նրա կյանքին վերազարթոնքի իր հույսերը:
Փրկված ու տարագիր ժողովուրդը վերստին ընձյուղեց իր կյանքը Սփյուռքում և
բարիքի փոխեց իր հանդեպ գործված բնաջնջումի չարաղետ ծրագիրը: Աստուծո սի-
րով, արարող ոգով Հայ Սփյուռքը բարձրացավ տարբեր երկրներում, տարբեր մշա-
կույթների կողքին ստանձնեց ժողովուրդների միջև եղբայրություն կերտող առա-
քելություն ու դարձավ նաև թիկունք ու զորություն Մայր Հայրենիքին՝ վերանկա-
խացյալ Հայաստանին ու ազատագրված Արցախին:

Հայոց հարուցյալ կյանքի հարազատ մեկ մասն է Միացյալ Նահանգների հայու-
թյունը, դուք, սիրելիներ, որ ազատասեր ու մարդասեր հողի վրա այս օրհնյալ երկ-
րի, ապրում ու ստեղծում եք և հոգ եք տանում, որ պայծառ լինի մեր Եկեղեցին: Լույ-
սով ու կյանքով լեցուն լինեն հայկական դպրոցները, գործեն ազգային հաստա-
տություններն ու միությունները, և ձեր զավակները տերերն ու շարունակողները լի-
նեն մեր ժողովրդի ժառանգության ու ավանդների, հույսերի ու ձգտումների, մեր
ժողովրդի հավատավոր ընթացքի:

Աշխարհասփյուռ հայության մեկ ու միասնական ճանապարհն է այս, ճանա-
պարհը հաղթանակների ու հարատևության: Գնահատում ենք, գնահատանքով ենք
անդրադառնում, որ միաբան և ուխտյալ ոգով ոգեկոչեցիք Մեծ եղեռնի 90-ամյա
տարելիցը, և հավատում ենք, որ միասնության նույն ոգով ամերիկահայ թեմերում
պիտի հաղթահարվեն ազգային եկեղեցական կյանքում ծառացած դժվարություն-
ները: Այն պառակտումը, որ ծնունդ է առել ժամանակի բերումով տասնամյակներ
առաջ: Միասնությամբ պիտի իրականանան մեր բոլոր նպատակները, և միասնութ-
յամբ պիտի ապրի ու զորանա մեր հավատը, որ մեր հայրերի Աստված մեզ հետ է Իր
օրհնությամբ: Ամեն արժեքավորն ու մնայունը այս արևի տակ պիտի կառուցվի Աս-
տուծո հետ, արդարության, ազատության, նոր կյանքի ու սիրո պատվանդաններին:

Այս հավատով մեր ժողովուրդը աղոթող է, որպեսզի ոչ մի ժողովուրդ էլ չտեսնի
ցեղասպանության ողբերգությունը: Այսօր, երբ շատ պետություններ, միջազգային
ու պետական կազմակերպություններ ճանաչում և դատապարտում են Հայոց ցեղա-
սպանությունը, Մենք հավատում ենք, որ այս մեծ ոճիրի համընդհանուր ճանաչումը
դառնալու է մարդկային կամքի դրսևորում, մերժելու բռնություններն ու պատե-

**բազմները: Այս ձգտումն այսօր մարդկանց մեջ ապրող ու աճող իրականություն է, և Մենք հավատում ենք, որ Միացյալ Նահանգները նույնպես պիտի ճանաչեն և դատապարտեն Հայոց ցեղասպանությունը, քանզի այսպես միայն Աստծուն փնտրող մարդկությունը պիտի կառուցի ավելի լավ մի նոր աշխարհ:**

**Մենք աղոթում ենք, որ Աստծո ճշմարտության հոգին, սիրո և արդարության հոգին աշխարհի հետ լինի, Տերը օրհնի բարի կամքի, եղբայրության ու համագործակցության բոլոր ճանապարհները: Աղոթում ենք, որ ամենախնամ մեր Տերը միշտ բարգավաճ ու առաջադեմ պահպանի Միացյալ Նահանգները իր ազատվածասեր ժողովրդով, և մեր ժողովրդի զավակները շարունակեն լինել ու մնալ հավատարիմ, շինարար ու հարգված քաղաքացիները իրենց այս մեծ ու հզոր երկրի՝ շարունակելով մնալ նաև զավակները մեր ժողովրդի և Հայաստանի:**

**Մեր հանդիպման այս ուրախ առիթով երախտագիտության մեր խոսքն ենք ուղղում Միացյալ Նահանգների իշխանություններին, քանզի մեր ժողովրդի զավակները ամեն հնարավորություն ու ազատություն ունեցան ապրելու և ստեղծելու, ինչպես նաև իրենց ազգային և հոգևոր կյանքը կառուցելու, հայ համայնք ու եկեղեցի գնալու: Թող Տերը միշտ ձեզ հետ լինի, սիրելի զավակներ Մեր, զորացյալ մնացեք ազատ Հայաստանի ու Արցախի նոր կյանքի, համայն հայության միացյալ ու վերազարթնյալ կյանքի հույսերով:**

**«Ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարեցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք և Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ» (Բ Կորնթ. ԺԳ 11) Ամեն:**

Նորին Սրբությունը, ի գնահատություն Հովնան Սրբազանի անմնացորդ ծառայության ու նվիրումի, նրան շնորհեց հոբելյանական պանակե՝ զարդարված Հայոց Այբուբենի 36 տառերով: Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաև կարդինալ Մահոնիին՝կաթոլիկ Մայր տաճարը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի եկեղեցական արարողություններին տրամադրելու համար, և նրան նվիրեց ականակուռ լանջախաչ:

Արարողությունից հետո ի պատիվ Վեհափառ Հայրապետի հյուրընկալություն էր կազմակերպել ամերիկահայ բարերար Ալբերտ Բոյաջյանը:

**6 հունիսի**

Առավոտյան ժամը 11-ին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Առաջնորդարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Սանուց միության անդամների հետ, որոնք իրենց ծառայությունն են բերում Արևմտյան թեմում:

Այս միությունը հիմնվել է անցած տարի ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի օրհնությամբ և Հովսեփ ավ. քհն. Հակոբյանի ջանքերով: Միության նպատակն է՝ օժանդակել հարազատ կրթօջախին: Ընկերության նախագահն է Համլետ սրկ. Մեհրաբյանը: Արևմտյան թեմում այժմ բնակվում և իրենց գործունեությունն են ծավալում Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 82 շրջանավարտներ: Միությունն այս տարվա մար-

պի 5-ին Արևմտյան թեմի Առաջնորդարանում հանդիսավորապես նշել է ճեմարանի հիմնադրման 130-ամյակը:

Հանդիպման ընթացքում թեմակալ առաջնորդ Հովնան Սրբազանը ուրախությամբ նշեց, որ նորաստեղծ միությունը որոշել է պարգևել 10.000 ԱՄՆ դոլարի չափով նվիրատվություն կատարել ճեմարանին: Մայր Աթոռի ավագագույն միաբաններից և ճեմարանի բազմամյա պատասխանատուներից ու դասախոսներից Ներսես արքեպս. Պոզապալյանը, ներկայացնելով ճեմարանի գործունեությունը, շեշտեց, որ ճեմարանը գտնվում է Վեհափառ Հայրապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում, և որ ճեմարանի շրջանավարտ բազմաթիվ սաներ հոգևորականի իրենց ձեռնադրությունն են ստացել ձեռամբ Վեհափառ Հոր: Այնուհետև խոսք ասաց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նախկին դասախոս, այժմ Ամերիկայում բնակվող պրոֆեսոր Սամվել Անթոսյանը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը, բարձր գնահատելով շրջանավարտների միության նախանձախնդրությունը, իր օրհնությունը բաշխեց նախկին ճեմարանականներին՝ հորդորելով նրանց հավատարմորեն ծառայել Հայ Եկեղեցուն ու ժողովրդին: Այնուհետև Վեհափառ Հայրապետը նախկին ճեմարանականներին պատմեց ճեմարանի այժմյան վիճակի և գործունեության մասին: Նորին Սրբությունը նաև հույս հայտնեց, որ շնորհիվ Հովնան Սրբազանի ջանքերի Սանուց Միությունը առավել է զորանալու և շարունակելու իր ծառայությունը և իր նպաստն է բերելու Արևմտյան թեմի եկեղեցական կյանքին:

Ժամը 14-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Գլենդեյլի Ադվենտիստական Բժշկական Կենտրոն, ուր նրան ողջունեցին հիվանդանոցի աշխատակազմը ու հոգևոր սպասավորները: Այս հիվանդանոցում աշխատում են և հայ բժիշկներ:

Նորին Սրբության ուղեկցում էին հայրապետական շքախմբի անդամներ՝ Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կանադայի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը, Արևմտյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաճատ ծ. վրդ. Ցարթմյանը, Ս. Հովհաննես Կարապետ հայկական եկեղեցու հովիվ Տ. Մանուկ ավ. քհն. Մարգարյանը և Կրեսենտա Վելիի հայկական եկեղեցու հովիվ Տ. Հովսեփ ավ. քհն. Հակոբյանը:

Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը իր խոսքում ասաց. «*Ինձ համար մեծ պատիվ է ձեզ ներկայացնել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այս պատմական այցելությունը մեզ հնարավորություն է տալիս նորոգել մեր քրիստոնեական հավատը, որի համար Նորին Սրբության Հայրապետական այցն Արևմտյան թեմ հռչակել ենք որպես Հավատքի Վերածնունդ: Հայրապետական այս այցը համընկնում է Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի և Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակի հետ: Հատկանշական է և այն փաստը, որ այս այցը համընկնում է նաև Գլենդեյլի Ադվենտիստական Բժշկական Կենտրոնի հիմնման 100-ամյակին*»:

Կենտրոնի վարչակազմի ղեկավարների և աշխատակիցների ջերմ ողջույններից հետո Վեհափառ Հայրապետը անմիջական զրույց ունեցավ հիվանդանոցի բժիշկների հետ, ծանոթացավ նրանց գործունեությանն ու ծրագրերին: Այնուհետև Նորին Սրբությունը օրհնեց Կենտրոնի նորակառույց շենքը:

Ժամը 18-ին Գլենդելում Հայոց Հայրապետը հանդիպեց Գլենդելի շրջանի չորս դպրոցների հայ աշակերտների հետ: Հանդիպման ընթացքում ներկա հարյուրավոր ուսանողներ ստացան Վեհափառի օրհնությունն ու Հայրապետական պատգամը:

Հանդիսության ընթացքում Նորին Սրբությանը ողջունեցին և այցի համար իրենց ուրախությունը հայտնեցին Գլենդելի շրջանի կրթության խորհրդի նախագահ Մերի Բոջերը և խորհրդի անդամ Գրեգ Գրիգորյանը: Աշակերտները հանդես եկան գեղարվեստական հայտագրով:

Վեհափառ Հայրապետի այցը ողջունեց նաև ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: *«Վեհափառ Հայրապետի այցելությամբ մենք պետք է նորոգենք մեր ծառայության և սիրո մեջ՝ հանդեպ Եկեղեցին և մեր մշակույթը: Վստահ ենք, որ այսօր կվերանորոգվի ձեր մեջ ավիրումի ոգին ու նախանձախնդրությունը հանդեպ հայկական ժառանգությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին»*,- ասաց Սրբազան Հայրը երիտասարդներին: Սրբազանը նաև շնորհակալություն հայտնեց Գլենդելի քաղաքապետին, դպրոցի տնօրինությանը, անձնակազմին և ուսուցիչներին՝ միջոցառման կազմակերպման համար:

Հանդիպման ավարտին աշակերտներին իր Հայրապետական պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բնաբան ունենալով սաղմոսի «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո» (Սղմ. Ծ 17) փողը: *«Այսօր Մեզ համար ձեր ներկայությունն այստեղ փոխակերպվում է Տիրոջ օրհնաբանության: Գոհություն ենք հայտնում Բարձրյալին, որ Սփյուռքը հավատարիմ է մեր պատմությանը, ավանդույթներին, Հայրենիքին և իր տեսիլքին: Մեր կապը երիտասարդության հետ նոր իմաստ է հաղորդում մեր կյանքին և Հայրապետական առաքելությանը»*,- ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով երիտասարդներին աներկյուղ ընթանալ Աստծո հետ:

Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի օրհնությունը և հայրենաբնակ մեր ժողովրդի սերն ու ողջույնները փոխանցելուց հետո իր խոսքը կենտրոնացնելով երիտասարդությանը վերաբերվող հիմնախնդիրների վրա՝ ասաց, որ Հայոց Եկեղեցին այսօր մտահոգ է մեր երիտասարդ սերնդի ընկերային-հասարակական և ընտանեկան բարոյական կյանքով: Այսօրվա հարափոփոխ աշխարհում տարածված են հոգևոր-բարոյական տարբեր մերժելի երևույթներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում և հայ կյանքից ներս, ուստի Վեհափառ Հայրապետը երիտասարդությանը կոչ արեց՝ իրենց կյանքը խարսխել կրոնական, եկեղեցական, ազգային և համամարդկային մնայուն արժեքների վրա, հորդորելով և այցելել Հայաստան ու Սուրբ Էջմիածին, Հայոց աշխարհի ավանդական սրբությունների հետ հաղորդությամբ նորոգելու իրենց հոգեկան կապը Հայրենիքի և Հայոց Եկեղեցու հետ:

Հանդիպմանը ներկա էին նաև Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը:

Երեկոյան ժամը 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ տեղի ունեցավ «Առաքել և Շաքե Աղա-Սարգսյան» թեմական գրադարանի բացման արարողությունը: Թեմական գրադարանը ստեղծվել է տեր և տիկ. Հարութ Աղա-Սարգըսյանի և պրն Սարգիս Աղա-Սարգսյանի ազնիվ բարերարությամբ՝ ի հիշատակ իրենց հոր՝ Առաքել Աղա-Սարգսյանի, ինչպես նաև ի հարգանս իրենց մոր՝ Շաքե Աղա-Սարգսյանի, որն իր զավակների և հարսների հետ ներկա էր արարողությանը:

Ավետարանի ընթերցումից հետո ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանն իր գնահատանքը հայտնեց նորաստեղծ գրադարանի բարերարներին, ինչպես նաև ասաց. *«Մենք ուրախ ենք, որ այս օրհնությունը կատարվեցավ ձեռամբ Վեհափառ Հայրապետին: Առաջնորդարանի պաշտոնական գրադարանը պիտի ըլլա նաև մեր բոլոր ընթերցասերներուն հարուստ գրադարանը, ուր կարելի պիտի ըլլա նաև ապահովապես գրքեր բերել ու նոր գրքերով ճոխացնել զայն»:*

Ապա Հայրապետական իր պատգամը ներկաներին ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարձր գնահատելով նվիրյալ հայորդիների օգտակար նախաձեռնությունը և շնորհավորելով թեմականներին՝ գրադարանի բացման առիթով, ի մասնավորի ասելով. *«Ուրախ եմ այս գեղեցիկ մտահղացման կապակցությամբ: Չի կարելի երևակայել Առաջնորդարանը առանց գրադարանի, ուր գտնվում են մեր ժողովրդի պատմությունն ու հավատքը լուսաբանող գրքեր, որոնցից օգտվելու են մեր զավակները»:*

Բացման արարողությունն ավարտվեց Հայոց Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ» աղոթքով:

Արարողությանը ներկա էին ՀՀ գլխավոր հյուպատոս Գագիկ Կիրակոսյանը և Ատլանտայի նախկին քաղաքապետ Բիլ Քեմպբելը:

**7 հունիսի**

Առավոտյան ժամը 10-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Գլենդեյլի քաղաքային վարչություն, ուր հանդիպում ունեցավ Լոս Անջելեսի շրջանի 12 հայկական դպրոցների ավելի քան 1200 ուսանողների, դպրոցների տնօրենների և ուսուցիչների հետ:

Նորին Սրբության ուղեկցում էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը, Տ. Մուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը: Հանդիպման պատասխանատուն և հանդիսավարն էր Բարսեղ Գարթալյանը:

*«Հրաշալի օր է այսօր, քանզի դուք՝ աշակերտներդ, հավաքվել եք ձեր հարգանքն ու ջերմ ողջույնները փոխանցելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին: Վստահ ենք, որ Ամենայն Հայոց Հայրապետի այցի շնորհիվ կշարունակեք ձեր կյանքն ապրել առավել հպարտությամբ՝ ի վկայություն Քրիստոսի Հարության և այն ճշմարտության, որ հայ ժողովուրդը պետք է ապրի հավիտյան»,-* դիմելով դպրոցականներին՝ ասաց Հովնան Սրբազանը:

Ողջույնի խոսքեր ասացին նաև Գլենդեյլի քաղաքապետ Ռաֆֆի Մանուկյանը, Տ. Մուշեղ արքեպս. Մարտիրոսյանը, դպրոցի տնօրենների կողմից խոսք ասաց Ռոզ և Ալեք Փիլիպոս վարժարանի տնօրեն դոկտ. Վիգեն Ղաշույանը: Ապա իրենց գեղարվեստական կատարումներով Ամենայն Հայոց Հայրապետին ու մյուս հյուրերին ողջունեցին այս դպրոցների սաները: Նրանք ներկայացնում էին Հայ Քույրերի Ակադեմիան, ՀԲԸՄ Մանուկյան-Դեմիրճյան, Մեսրոպյան, Շարլոթ և Էլիզ Մերդինյան ավետարանչական, Արի Կիրակոս Մինասյան, Մխիթարյան միաբանության, Վահան և Անուշ Շամլյան, Ս. Սահակ-Մեսրոպ, Ալֆրեդ և Մարգարիտ Հովսեփյան, TCA Արշակ Տիգրանյան, Ռոզ և Ալեքս Փիլիպոս ու Ֆերահյան դպրոցները:

Դիմելով երիտասարդներին՝ Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց միջոցառմանը ներկա գտնվելու և երիտասարդներով շրջապատված լինելու համար՝ երիտասարդներին կոչ անելով կենդանի պահել հայոց լեզուն ու սերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ:

Հանդիպման ընթացքում ընթերցվեց նաև Նորին Սրբության Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որով Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրվեց բարերար Ժակ Հակոբյանը: Շքանշանը բարերարին հանձնեց Վեհափառ Հայրապետը:

Կեսօրին Նորին Սրբությունը Առաջնորդարանում հանդիպեց Հայ իրավաբանների միության անդամների հետ: Հանդիպման կազմակերպիչն էր Ժոզեֆ Կանիմյանը:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Միության անդամների պատրաստակամությունը աջակցելու Հայոց եկեղեցուն, հիշատակեց իրավական այն խնդիրները, որոնք ծագել, սակայն, բարեբախտաբար, լուծվել են ինչպես Սինգապուրի Հայոց եկեղեցու պարագայում, այնպես էլ մի շարք այլ դեպքերում՝ հույս հայտնելով, որ համանման իրավիճակների ստեղծման դեպքում կակնկալի նաև հայ իրավաբանների այս միության անդամների աջակցությունը:

Նորին Սրբությունը այնուհետև անդրադարձավ հայ եկեղեցական իրավունքի հուշարձաններին և ի մասնավորի Մխիթար Գոշի «Դատաստանագրքին»՝ առաջարկելով, որ հայ իրավաբանների մի խորհրդաժողով կազմակերպվի Գոշավանքում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելեց Լոս Անջելեսի Մանկական հիվանդանոց: Իր գնահատանքը հայտնելով այստեղ աշխատող բժիշկներին՝ Նորին Սրբությունն ասաց, որ ինքնին հրաշագործություն է երեխաների առողջությունը բարելավելը՝ իր գնահատանքը հայտնելով նաև այն օգնության համար, որ այս հիվանդանոցը 1988 թվականից ցուցաբերում է Հայաստանի երեխաների հանդեպ: Այնուհետև Վեհափառ Հայրապետն այցելեց հիվանդասենյակներ և աղոթեց այստեղ բուժվող երեխաների, այդ թվում և հայ մանուկների շուտափույթ ապաքինման համար:

Ի հիշատակ այս այցելության՝ Վեհափառ Հայրապետը հիվանդանոցին նվիրեց Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի արարումը ներկայացնող մի նկար:

ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ Հայրապետական այցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը արդեն իր չորրորդ հանդիպումը երիտասարդության հետ ունեցավ նույն օրը Բըրբենքի միջնակարգ դպրոցի դահլիճում: Այստեղ Նորին Սրբության օրհնությունն ու պատգամը ստացան Բըրբենքի հայ վարժարանների ուսանողները:

Բըրբենքի դպրոցների Միացյալ շրջանի կրթական մարմնի նախագահ Փոլ Գրիգորյանը, բարիգալստյան խոսք ասելով Նորին Սրբությանը, ներկայացրեց Բըրբենքի շրջանի Միացյալ կրթական մարմնի անդամներին:

Հանդիպման սկզբում Մարի Ցան-Վարդանյանի կատարմամբ հնչեցին Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության օրհներգերը:

Առաջնորդ Սրբազան Հայրը այս վարժարանում իր խոսքը ուղղելով աշակերտներին՝ ասաց. *«Ուրախ ենք, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեր թեմում կգտնվի: Իր՝ժամանումեն ի վեր Նորին Սրբությունը մի քանի առիթներով հանդիպումներ ունեցավ երիտասարդության հետ՝ Իր անհուն սերն ու հարգանքը ցուցաբերելով երիտասարդության հանդեպ: Ան գիտե, որ երիտասարդության ջանքերուն շնորհիվ կարելի է բազմաթիվ նոր ծրագիրներ մշակել: Արարատյան թեմին ներս Վեհափառ Հայրապետը շատ մը ծրագիրներ նախաձեռնեց երիտասարդության համար: Իր հայրախնամ ջանքերուն շնորհիվ այսօր 8000 ուսանողներ առիթ ունին արվեստի կեդրոններ հաճախելու Հայաստանի մեջ: Երիտասարդությունը իրապես առարկան դարձած է Նորին Սրբության տեսիլքին, և Վեհափառը այսօր իրեն՛ հետ մեզի կբերե Հայաստանի և Սուրբ Էջմիածնի սերը»:*

Հայրապետական շքախմբի անդամ Ռոբերտ Ամիրխանյանը կատարեց «Հայաստան», «Երազ իմ երկիր» և «Ամպի տակից» երգերը:

*«Վերջին մի քանի օրերի ընթացքում ականատես ենք եղել այն փոքր Հայաստանին, որ արդեն կառուցել եք այստեղ: Հայաստանը ձեր երգի ու պարի, ամունքի ու աղոթքների մեջ է: Մեր հոգին ցնծում է այդ տեսանելի: Թող որ Աստված օրհնի ու պահպանի ձեզ»,-* իր օրհնությունը երիտասարդներին տվեց Վեհափառ Հայրապետը:

Ի հիշատակ այս այցելության՝ Նորին Սրբությունը հայկական մի յուղաներկ կտավ նվիրեց Բըրբենքի շրջանի Միացյալ կրթական մարմնի նախագահ Փոլ Գրիգորյանին:

Երեկոյան ժամը 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Փասադենայում մասնակցեց ՀԲԸՄ Հարավային Կալիֆոռնիայի Շրջանային Հանձնաժողովի (ՀԿՇՀ) կողմից ի պատիվ Հայրապետական այցելության կազմակերպված ընդունելությանը, որին ներկա էին ավելի քան 400 հոգի:

Երեկոն վարում էր թեմական խորհրդի փոխատենապետ Վահրամ Պիրիճիքը:

Բացման խոսք ասաց ՀԲԸՄ-ի անդամ Արա Պապայանը: Այնուհետև Վեհափառ Հայրապետին ողջունեցին ՀԿՇՀ-ի նախագահ Վահե Իմաստունյանը եւ ՀԿՇՀ-ի անդամ Սինան Սինանյանը: Ենոք Բալիքյանը ներկայացրեց այն աշխատանքները, որոնք վերջին տարիներին իրականացվել են ՀԲԸՄ-ի և Մայր Աթոռի համագործակցությամբ: Նրանք իրենց շնորհակալությունը հայտնեցին Նորին Սրբությանն այն մեծ հոգևոր-բարոյական աջակցության համար, որ ՀԲԸՄ-ը շարունակ ստանում է Հայոց Հայրապետից: Խոսք ասաց նաև Մխիթար Հերացու անվան Երևանի բժշկական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը:

Ապա ցուցադրվեց մի փեսաժապավեն, որում ներկայացվում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ լինելու փարիններին Նորին Սրբության և ՀԲԸՄ-ի կողմից իրականացված համատեղ ծրագրերը:

Այնուհետև ներկաներին իր խոսքն ուղղեց Նորին Սրբությունը: Վեհափառ Հայրապետը շեշտեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ՀԲԸՄ-ի միջև համագործակցության մեծ նշանակությունը և ՀԲԸՄ-ի ազգօգուտ առաքելությունը:

Հանդիպման վերջում Գարեգին Երկրորդը հայկական յուղաներկ մի կտավ նվիրեց ՀԲԸՄ Արևմտյան Ամերիկայի շրջանային վարչության ատենապետ Վահե Իմաստունյանին:

ՀԲԸՄ-ին ուղղված գնահատանքի խոսք ասաց և ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Տ. Մուշեղ արքեպս. Մարտիրոսյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպս. Գալստանյանը, ինչպես նաև թեմի մի շարք հոգևորականներ և հյուրեր:

**8 հունիսի**

Առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Սեյվի Թուֆենկյան դպրոց, ուր հանդիպեց դպրոցի տնօրինության, ուսուցիչների և աշակերտների հետ՝ բարձրորեն գնահատելով տեր և տիկին Ռալֆ և Սավի Թուֆենկյանների կրթանվեր և հայրենանվեր գործունեությունը:

Հանդիպման ընթացքում գեղարվեստական հայտագրով հանդես եկան աշակերտները, ապա ողջույնի խոսք ասաց Տ. Մուշեղ արքեպս. Մարտիրոսյանը: Մուշեղ Սրբազանը իր խոսքում ի մասնավորի ասաց. *«Ինձի համար հոգեկան մեծ գոհունակության պահ է այս պահը, որովհետև մեկ անգամ մը ևս ես պատիվը ունիմ որդիական սիրով և հարգանքով բարի գալուստ ըսել Ձեզի և Ձեր օրհնաբեր այցելությունը վայելելու այս անգամ այս հարազատ հրաշ մեջ: Երեկ առավոտ մեր ազգային վարժարանի աշակերտները Դուք օրհնեցիք, իրենք Ձեզի բարի գալուստ մաղթեցին և ստացան Ձեր հայրապետական օրհնությունը: Ձեր շնորհաբեր այցելությունը բարի ըլլա, և այն հաստատությունը, որ այսօր կայցելեք, այս հաստատությունը մեր Սուրբ Աստվածածին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո Ռիչարդ Թուֆենկյան մանկամսուր մանկապարտեզն է, որ հաստատված է բարերարությամբը մեր սիրելի բարերարներեն տեր և տիկին Ռաֆ և Դավիթ Թուֆենկյաններու կողմեն ի հիշատակ իրենց վաղամեռիկ որդուն՝ Ռիչարդի: Աստված օրհնե հիշատակը Ռիչարդի, և վստահ ենք, Դուք ալ Ձեր աղոթքներու մեջ հիշած եք և կհիշեք հանգուցյալ վաղամեռիկ Ռիչարդը:*

*Այսօր կտեսնենք, որ մեր երեխաները, ծագուկները, որոնք հիմա դեմ դիմաց կանգնեցան, Տերունական աղոթքը երգեցին և երգեր հրամցուցին, իրենք ամենեն բախտավորներն են, որովհետև շատ մոտեն կվայելեն Ձեր ներկայությունը և պիտի ստանան Ձեր օրհնությունները, Վեհափառ Տեր: Նաև այսօր այստեղ Ձեր*

*օրհնությունը ստանալու համար մեզի հետ են ներկայացուցչական համգամանօրհնությունը ստանալու համար մեզի հետ են ներկայացուցչական հանգամանքով թեմի հոգևորականության և ազգային իշխանության ներկայացուցիչները»:* քով թեմի հոգևորականության և ազգային իշխանության ներկայացուցիչները»:

Նորին Սրբությանը ողջույնի խոսք ասաց և դպրոցի տնօրեն Արսինե Աղազարյանը:

Հանդիսության ավարտին երեխաներին օրհնեց և հավաքվածներին իր Հայրապետական պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ասելով, որ ավելի օրհնյալ ծառայություն ազգի համար չկա, քան մանուկներին հայեցի կրթություն տալը, որը ազգապահպանման հիմքն է ու պատվանդանը, որի վրա բարձրանում է մեր ազգային կյանքի շենքը, և որքան որ մենք կարողանանք հայաշունչ կրթել մեր զավակներին, այնքան ամուր կլինի այդ կառույցը, այնքան հաստատուն կլինի այդ շենքը:

Ապա Առաջնորդարանի ընդունելությունների դահլիճում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որի ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց Լոս Անջելեսի հայկական և անգլիալեզու հայ մամուլի ներկայացուցիչների հարցերին:

Ժամը 12-ին «Արշակ և Էլեանոր Տիգրանյան» համալիրում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց բարձրաստիճան պաշտոնյաների և տարբեր Եկեղեցիների, այդ թվում և՝ Կաթոլիկ, Ասորի Ուղղափառ, Ղպտի Ուղղափառ, Հույն Ուղղափառ, Անտիոքի Ուղղափառ, Լյութերական, Միացյալ Մեթոդիստ Եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

Այս հանդիպման հյուրընկալներն էին Վոլտեր և Լորի Քարապյանները, իսկ կազմակերպիչը՝ Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը՝ ատենապետությամբ Լիլի Դայանի:

Հայերենով և անգլերենով բարիգալստյան խոսք ասաց Քարապյանների դուստր, Թեքեյան Մշակութային Միության Արշակ Տիգրանյան վարժարանի Զ լսարանի սան Մադլեն Արաքսին:

Նորին Սրբությունը, իր օրհնության խոսքն ուղղելով ներկաներին, շնորհակալություն հայտնեց նրանց՝ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի տարբեր ծրագրերին աջակցելու պատրաստակամության համար, ինչպես նաև շեշտեց միջեկեղեցական հարաբերությունների կարևորությունը՝ վկայակոչելով «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» խոսքերը և նշելով, որ այդ ոգով Հայոց Եկեղեցին 1962 թվականից անդամակցում է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, ապա և Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսին: Վեհափառ Հայրապետը ասաց, որ իր գահակալությունից հետո այցելել է քույր Եկեղեցիների հոգևոր կենտրոններ՝ հանդիպելով նրանց հոգևոր պետերին, վերահաստատելով Հայոց Եկեղեցու եղբայրության ոգին ու համագործակցության պատրաստակամությունը, իսկ 1700-ամյակի օրերին Մայր Աթոռում ընդունել 37 Եկեղեցիների հոգևոր պետերին և կամ էլ նրանց ներկայացուցիչներին:

Նորին Սրբությունը ուրախությամբ նաև արձագանքեց, որ գործակցության այս ոգին տիրում է նաև թեմերից ներս, որի արտահայտություններից է քույր Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությունը այս հավաքին:

Վերջում առաջնորդ Սրբազանը հանդիսության փակման աղոթքը կատարելու համար հրավիրեց Լոս Անջելեսի Կաթոլիկ Եկեղեցու թեմի կարդինալ Ռոջեր Մահոնիի ներկայացուցիչ և Միջեկեղեցական բաժանմունքի վարիչ հայր Ալեքսի Սմիթին, որը աղոթեց անգլերենով՝ բարձր գնահատելով էկումենիկ այս հավաքը: Ապա Ասորի Եկեղեցու տեղի առաջ-

նորդ Սրապիոն Սրբազանը արամերենով ասաց «Հայր մեր»-ը: Այնուհետև Հույն Օրթոդոքս Եկեղեցու առաջնորդի ներկայացուցիչ հայր Վան Դաքասը հունարեն երգեց Սուրբ Հարության նվիրված մի շարական:

Հանդիսության ընթացքում «Սփյուռք» լարային քառյակը հանդես եկավ մի շարք ազգային-հոգևոր երգերի կատարմամբ:

Նորին Սրբությանն ուղեկցում էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, ինչպես նաև թեմի մի շարք հոգևորականներ:

Երեկոյան ժամը 7-ին Առաջնորդարանի «Գալայճյան» սրահում տեղի ունեցավ ընդունելություն-հյուրասիրություն, որին հրավիրված էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի տարբեր տարիների Հայրապետական շքանշաններ և Օրհնության գրեր ստացած բարերարները:

Այս հանդիսությունը կազմակերպել էին տեր և տիկին Արմեն և Նորա Համբարը, որոնց հովանավորությամբ հայրապետական այցելության այս օրերին հրապարակվել էր և Նորին Սրբության գործունեությանը նվիրված մի գրքույկ: Օրվա հանդիսավարն էր Բարսեղ Գարթալյանը: Մի շարք երգերի կատարմամբ հանդես եկավ Գաբրի Մկրտչյան Գամբրթը՝ դաշնամուրային դաշնավորմամբ Գլորիա Միքայելյանի: Հանդիսության ընթացքում Հովնան Սրբազանը ծանուցեց տարբեր բարերարների կողմից Մայր Աթոռին կատարված նվիրատվությունների մասին, ինչպես նաև տեղեկացրեց, որ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի ատենապետ դոկտ. Վարուժան սրկ. Ալթպարմաքյանը հայրապետական տնօրինությամբ նշանակվել է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

Ի գնահատություն թեմի բարերարներից Ալբերտ Բոյաճյանի կատարած տարբեր նվիրատվությունների՝ Վեհափառ Հայրապետը նրան պարգևատրեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով: Այս հանդիպմանը հրավիրված էին թեմի բոլոր հոգևորականները՝ եկեղեցականաց հետ միասին, և Վեհափառ Հայրապետը քահանայական լանջախաչեր շնորհեց բոլոր քահանաներին:

Ի գնահատություն տեր և տիկին Արմեն և Նորա Համբարի ազգային-եկեղեցական կյանքին բերած նպաստին՝ Նորին Սրբությունը նրանց նվիրեց արծաթյա մի խաչ: Բարձրորեն գնահատելով ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի թեմակալ նախկին առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանի երկար տարիների աշխատանքը, ինչպես նաև ծննդյան 75-ամյակի առիթով Վեհափառ Հայրապետը Սրբազան Հորը պարգևատրեց Գրերի Գյուտի 1600-ամյակի առիթով Մայր Աթոռում պատրաստված եպիսկոպոսական մի պանակեով:

**9 հունիսի**

Առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի 40 եկեղեցականների հետ:

Հանդիպման ընթացքում առաջնորդ Սրբազան Հայրն իր գնահատանքի խոսքն ուղղեց թեմի հոգևորականներին՝ նրանց նվիրյալ ծառայության համար, և շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ եկեղեցականներին լանջախաչեր շնորհելու համար: Ապա Սրբազան հայրը Նորին Սրբությանը հրավիրեց իր պատգամը ուղղելու թեմի համախումբ հոգևոր դասին:

Ամենայն Հայոց Հայրապետը նախ իր գնահատանքը հայտնեց Հովվապետական այցի հաջող կազմակերպման համար, ապա անդրադարձավ Ամենայն հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայիս առաքելությանը և իրագործվող ծրագրերին: Վեհափառը հանգամանորեն ներկայացրեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի նոր կարգավիճակը՝ նշելով, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանում և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում ներկայիս ուսանում են 250 սաներ: Ծրագրվում է մոտ ապագայում վերաբացել Շիրակի ընծայարանը:

Նորին Սրբությունն ուրախությամբ նշեց, որ բազում նոր ձեռնադրյալ եկեղեցականներ են սպասավորության կոչվում, նոր եկեղեցիներ կառուցվում, խոնարհված վանքեր ու սրբատեղիներ վերականգնվում: Հայոց Հայրապետը նաև խոսեց կրթական և սոցիալական ոլորտներում Եկեղեցու բերած սպասավորության մասին՝ մասնավորապես հիշատակելով «Ս. Ներսես Մեծ» հիվանդանոցը, բժշկական կենտրոնները, որբանոցները, բարեգործական ճաշարանները, կարիքավորներին օգնություն տրամադրող տարբեր գրասենյակները, «Շողակաթ» հեռուստաընկերությունը և այլ ազգօգուտ ձեռնարկներ:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը, օրհնելով թեմի եկեղեցականներին, հորդորեց հավատարիմ նախնյաց ժառանգությանը՝ առավել նախանձախնդրությամբ և նվիրումով շարունակել իրենց ծառայությունը հայ ժողովրդին:

Կեսօրին Վեհափառ Հայրապետը Առաջնորդարանի «Արմեն և Գլորիա Համբար» սրահում հանդիպեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի թեմական խորհրդի նախկին և ներկայիս անդամների հետ՝ գլխավորությամբ խորհրդի ատենապետ Վարուժան սրկ. Ալթըբարմաքյանի: Հանդիպմանը ներկա էին թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը և առաջնորդական ընդհանուր փոխանորդ Տ. Տաճատ ծ. վրդ. Յարտըմյանը:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բազմակողմ գործունեությունը: Քննարկվեցին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի և Մայր Աթոռի առջև ծառացած զանազան խնդիրներ:

Թեմի պատմության մեջ առաջին անգամ լինելով՝ առաջիկա հոկտեմբերին թեմական խորհրդի անդամները, գալով Ս. Էջմիածին, Մայր Աթոռում համատեղ ժողով պետք է գումարեն Նորին Սրբության նախագահությամբ:

Հանդիպման վերջում Հայոց Հայրապետը բարձր գնահատեց թեմական խորհրդի նվիրյալ ծառայությունը և հորդորեց՝ այսուհետ ևս աջակցել ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի գործունեությանը ու հոգևոր առաքելությանը:

Վեհափառ Հայրապետը կեսօրին Առաջնորդարանում հանդիպեց ՀՅԴ պատվիրակության հետ: ՀՅԴ ներկայացուցիչները բարի գալուստ մաղթեցին Վեհափառին և ողջունեցին Նորին Սրբության օրհնաբեր այցելությունը:

Հայոց Հայրապետը, ներկայացնելով Մայր Աթոռի ծավալած գործունեությունը, անդրադարձավ նաև Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ ընթացող քննարկումներին՝ ասելով, որ հուսալից է, թե այս գործընթացը դրական արդյունքի է հանգելու:

Երեկոյան ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Հոլիվուդի Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցի:

Հայրապետական թափորի ընթացքին Տիգրանյան վարժարանի սաները աղավնիներ երկինք բաց թողեցին՝ կատարելով և «Հրաշափառ»-ի երգեցողությունը: Կանոնական աղոթքից հետո Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք ասաց Հովնան Սրբազանը՝ նշելով, որ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Մանուկ ավ. քհն. Մարգարյանի, ծխական խորհրդի ատենապետ դոկտ. Եղիա Մարգարյանի, Շինության հանձնախմբի և Տիկնանց միության ջանքերի շնորհիվ ծուխը նորանոր հաջողություններ է արձանագրում, և որ բարեբար ամուսիններ, ղեղագործներ պեր և փիկին Պետրոս և Կարինե Տաղյանների մեծագումար բարերարության շնորհիվ պետք է կառուցվի «Տաղյան» մշակութային կենտրոնը:

Ի գնահատություն Տաղյան ամուսինների եկեղեցաշեն այս ձեռնարկի՝ Վեհափառ Հայրապետը նրանց պարգևատրեց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տե՛ս «Էջմիածին», Դ, էջ 14): Իր խոսքում Հովնան Սրբազանը ի մասնավորի ասաց. *«Ուրախությամբ և հրճվանքով է մեր սիրտն այսօր լցված, Վեհափառ Տեր: Եկել ենք եռանդով և հոգևոր ուժականությամբ խանդավառելու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակներին: Մենք հավատում ենք, որ երբ Հայոց Հայրապետը հովվապետական այցով լինում է սփյուռքյան թեմերում, իր օրհնությունն է բաշխում Հայաստանյայց Եկեղեցու իր զավակներին, հովվապետական այդպիսի ամեն մի այցը մղում է յուրաքանչյուր հայ քրիստոնյայի համար, որպեսզի իր էության մեջ զգա հոգևոր վերազարթոնք, հավատարմության նորովի զգացողությամբ ատրվածապարգն իր կյանքը շարունակել ապրելու համար մեր ժողովրդի և Հայաստանյայց Եկեղեցու փառքի համար:*

*Վեհափառ Տեր, անցնող հինը օրերը Հարավային Կալիֆոռնիո մեր ժողովուրդի համար շարունակաբար, վայրկյան առ վայրկյան եղան խիկապես ներշնչող հոգևոր խնամքով ու հարստացնող, որովհետև Ձեր պատգամները լցրին մեր բոլորի հոգիները հայրենական շունչով, Ս. Էջմիածնի կարոտով, և Ձեր անձը դարձավ բոլորիս համար այն ոսկե կամուրջը, որ միացնում է Հայրենիք և Սփյուռք ապրող մեր ժողովրդի զավակները:*

*Բարի գալուստ ենք մաղթում Վեհափառ Հայրապետին և ուրախ ենք, որ Վեհափառ Հայրապետի հովվապետական այս երկրորդ այցելությունը ինչպես մեր թեմի տարբեր համայնքներից ներս նշանավորվում է և նվիրագործվելու է պատմական հիշարժան եղելություններով, այս եկեղեցու կյանքի մեջ ևս այդպես է, և հովվապետական այցելությամբ «Հրաշափառ»-ի այս արարողության մեջ ծնվում է մի նոր պատմական իրաշագործ օր Սուրբ Հովհաննես Կարապետ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու համայնքի կյանքի մեջ, ուր այս եկեղեցու հավատավոր զավակներ՝ մեծարգո դոկտոր Պետրոս և Կարինե Տաղյանների մեծագնիվ բարերարությամբ կարելի դարձավ Տաղյան համալիրի կառուցումը Աստծո փառքի և մեր Սուրբ Եկեղեցու հիմքերի առավել զորացման համար»:*

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Տաղյան ամուսինների հանձնառությունը՝ կառուցելու Մշակութային այս կենտրոնը, մաղթեց, որ շրջանի հայությունը և նոր սերունդը համախմբվեն այստեղ՝ իրենց հոգեկան ուժը սփանալով եկեղեցու նվիրական հարկի ներքո:

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՈԼԻՎՈՒԴԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*«Այսօր է, զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա»:*

**(Սղմ. ՃԺԷ 24)**

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Այսօր, սիրելի բարեպաշտ հայորդիներ, ցնծանք և ուրախանանք, որովհետև այսօր շնորհի ենք արժանացել՝ վերստին հովվապետ և հոտ միասին լինելու: Ցնծանք և ուրախանանք, որովհետև այսօր շնորհն ունենք միմյանց հաղորդակից լինելու և մեր հոգու ջերմությամբ իրականացնելու մեր իղձերն ու փափագները, եկեղեցու կողքին այս համալիրի կառուցմամբ: Առաջին վայրկյանից, երբ մուտք գործեցի այս եկեղեցու հարկից ներս, հանդիպեցի դեռևս առաջնորդական փոխանորդության պարիներից ինձ ծանոթ հարազատ դեմքերի ու զգացի, որ Հայաստանն է շնչում այս եկեղեցվո հարկի ներքո: Այդ նույն զգացողությունը ապրեցի՝ լսելով մեր փոքրիկ անուշիկ զավակների «Էջ Միածինն ի Հօրէ» երգը, որ Հայաստանյան շեշտադրությամբ էր երգվում:

Մենք, սիրելի հայորդիներ, ձեր կարոտյալ սրտերին բերել ենք ողջույն հայրենի մեր երկրից, բերել ենք կարոտ ձեր եղբայրներից ու քույրերից, բերել ենք ձեզ հայրենյաց շունչը, հայացքը մեր փառապանծ Մասիսների, բույրը Հայոց լեռների, որպեսզի խառնենք այն ձեր կյանքին, ու նորովի զորություն ապրեք դուք և մխիթարությունը ունենաք ձեր հոգիներից ներս:

Մենք գիտենք, որ կարոտյալ ձեր սրտերը և ձեր հայացքը ուղղյալ են դեպի Հայաստան մեր երկիրը, և որ դուք ապրում եք այստեղ հայրենական շնչով, ձեր սիրտը տրոփում է Հայաստանի կյանքով, հրճվում և ուրախանում ձեռքբերումներով և փխրում ու ցավում անհաջողություններով հայրենի մեր երկրի: Այսօր, սակայն, ուրախություն է փիրում մեր հոգիներին, որովհետև Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք եկել բաշխելու ձեզ, և Մեր մաղթանքն ու աղոթքն է, որ այս ուրախությունը ուղեկից լինի ձեզ ձեր կյանքի բոլոր օրերին: Ամերիկայի հեռավոր այս ափերում մեր նախնիք շենացրել են հայ կյանքը և ազգային եկեղեցական մեր պատմությունը զարդարել Միացյալ Նահանգաց ափերում հայրենասեր իրագործումներով, հայրենաշեն նախաձեռնություններով:

Այսօր Մենք ականատեսն ենք մի նոր վկայության, այսպիսի գեղեցիկ նախաձեռնության: Հայաստանցի ազնիվ բարեպաշտ զավակներ Տաղյան ընտանիքը ձեռնարկել է բարեզարդել, պայծառացնել և գեղեցկացնել այս Սուրբ եկեղեցին, որի պատերը ներծծված են աղոթքներով հայորդյաց, որպեսզի նրանք զան-կանգնեն աղոթքի այս նվիրական հարկի ներքո և իրենց հայցը երկինք վերառաքեն՝ խնդրելով Աստուծո սերը, Աստուծո ողորմությունը և օգնականությունը ազգիս հայոց:

Տաղլյան ամուսինների ազնիվ բարերարությամբ այս եկեղեցին պիտի օժտվի նաև ընդարձակ, պայծառաշուք, ինչպես մեզ փղեկացրեցին, հայկական ճարտարապետության ոճով կառուցվող մի սրահով: Մշակութային մի սրահ, ուր պիտի ուրախանա, ուր պիտի ցնծա հայ հոգին և հայ կյանքը նոր զորությամբ պիտի իր դրսևորումն ունենա այս պայծառաշուք հարկի ներքո:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, այսպես պիտի կառուցենք, շենացնենք հայ կյանքը, բայց մենք գիտենք, որ ձեր հոգին միշտ լինելու է ուղղված դեպի Հայաստան մեր երկիրը, որտեղ թողել եք ձեր նախահայրերը, որտեղ թողել եք ձեր աղոթքը, ձեր հայցը և ուր հոսեցրել եք ձեր քրտինքը՝ խառնելով այն նվիրական հողին մեր Հայրենյաց: Մեր հայցն ու մաղթանքն է, որ Աստված պահի-պահպանի ձեզ առողջ և ձեր գործերում միշտ հեղի հաջողությունների օրհնությունը, որպեսզի կարողանաք ձեր զավակաց հետ այցի գալ Հայաստան, համբուրել սրբությունները մեր նվիրական, հագեցնել կարոտը ձեր հոգիների և օրհնել նոր օրը հայոց կյանքի, որ կերտվում է ազատ ու անկախ մեր Հայրենիքում: Մենք այս առիթով Մեր գնահատանքն ենք բերում ձեզ, որ շարունակարար ո՛չ միայն ձեր մտահոգություններով, ո՛չ միայն ձեր կարոտով դուք Հայրենիքի հետ եք, այլ նաև ձեր աջակցությամբ և զորակցությամբ կիսում եք հոգսը Հայրենիքում ապրող ձեր քույրերի ու եղբայրների, թեթևացնում եք հոգսը ձեր Հայրենիքի:

Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ձեր սիրեցյալ առաջնորդին՝ Հովնան Սրբազանին, որ առանձնահատուկ սիրով իր ծառայությունն է բերում ձեզ, որպեսզի կյանքը ձեր լեցվի բույրով հայրենի և ձեր հոգին միշտ ուրախության մեջ լինի, դուք ապրեք հեռավոր այս ափերում ձեր ջանքերով, ձեր հավատքով, ձեր երազներով և ձեր աղոթքով կերտած փոքրիկ Հայաստանի մեջ : Մենք օրհնում ենք Տաղլյան ամուսիններին, սիրելի Պետրոսին և Կարինեին, ովքեր աջակցում են փոքրիկ Հայաստանի կերտմանը ձեզ համար, որպեսզի լինի հարազատ օջախ ձեր և ձեր զավակաց համար:

Թող Տերը օրհնությամբ լեցնի ազգային և անհատական ձեր հարկերը, և դուք ապրեք միշտ փառաբանական աղոթքը ձեր շուրթերին կրելով, որ Տերը միշտ զորավիգ է մեր ազգին և պահապան, որ Տիրոջ օրհնությամբ մենք հաղթահարում ենք մեր կյանքում առաջացող, ծնվող բոլոր դժվարություններն ու խոչընդոտները և շենացնում նոր հույսերով մեր կյանքի ուղին: Թող Տիրոջ օրհնությունը հովանի դառնա հայոց Արևմտյան թեմին Միացյալ Նահանգների և ապրեք այդ օրհնության ներքո, ձեզ առաջնորդ ունենալով ձեր եկեղեցու իսկ խորանի վրա արձանագրված Տիրոջ պատգամը, միմյանց նկատմամբ սեր տածելով և միմյանց հետ սիրով ապրելով ու Տիրոջ զորակցությամբ ձեր նոր կյանքը հեռավոր Ամերիկայի ափերում կերտելով:

Շնորհը, սերը և խաղաղությունը մեր Տիրոջ և Հիսուսի Քրիստոսի թող լինի ձեզ հետ և թող լինի մեր բարերար Տաղլյան ընտանիքի հետ, որ միմյանց զորակից ու աջակից կարողանաք իրականացնել այն գեղեցիկ ծրագրերը, որ հյուսվում են ձեր սրտերում և բարերարի ազնիվ հոգում, և թող Աստված միշտ ուղեկից լինի ձեզ, որ

ձեր կյանքը հաղթանակներից հաղթանակ ընթանա և հաջողություններից հաջողություն: Մնացեք սիրո մեջ հաստատուն և մնացեք ձեր հավատքի մեջ հաստատուն դեպի մեր Տերը, դեպի մեր Հայրենիքը և մեր նվիրական ու սուրբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Ի հիշատակ այս հանդիպման՝ Վեհափառ Հայրապետը փեղի հայ համայնքին նվիրեց Արարատյան դաշտը պատկերող մի կտավ, ապա փեղի ունեցավ Աջհամբույր:

**10 հունիսի**

Լոս Անջելեսի Հարավային Կալիֆոռնիայի համալսարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց «Գլոբալիզացիան և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին» գիտաժողովին, որը կազմակերպվել էր ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի, Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի (ՀԿՀ) հայագիտության ամբիոնի և կրոնական ու քաղաքական մշակույթի կենտրոնի կողմից:

Գիտաժողովի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանդես եկավ «Ս. Գրիգորի հաջորդների հովվությունը՝ գլոբալիզացված աշխարհում» բանախոսությամբ՝ ի մասնավորի ասելով. *«Մեր ժողովուրդը, լինելով Քրիստոսին հավատացող ժողովուրդ, ընդունելով Քրիստոսի Ավետարանը և մեր սուրբ հայրերի պատվիրանները ու պատգամները, մեզ է փոխանցել նաև բանալին՝ հաղթահարելու դարերի և ժամանակի ընթացքին մեր Եկեղեցու և ազգի առջև ծառացող ամեն հիմնախնդիր, ամեն մարտահրավեր: Եվ այս բանալին մեզ տրվել է առաքյալի հետևյալ խոսքերով. «Սէր ոչ երբեք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8)՝ սերը երբեք չի կորչում, սերը հաղթանակների է առաջնորդում:*

*Այս գաղափարի, այս սրբի հավատարումը մենք բազմիցս ունենք վկայված մեր պատմության մեջ: Առաջին իսկ առիթով մեր մտածումի մեջ վեր է հառնում հայոց Գրերի Գյուտը, որի 1600-ամյակը մենք տոնախմբում ենք այսօր: Մեսրոպ Մաշտոց և Թարգմանչաց խումբը, ովքեր Հայաստանից գացին երկրներ մեկնեցին ուսանելու և վերադարձան Հայրենիք, իրենց հետ բերելով հարևան ժողովուրդների հոգու և մտքի արգասիքները և զուգորդելով մեր հայրենի արժեքների ու ժառանգության հետ, կերտեցին Հայոց Ոսկեդարը:*

*Թարգմանչաց սերնդի հետևողը այսօր պետք է լինենք մենք: Թարգմանչաց բոլոր Հայոց Ոսկեդարը կերտեց՝ ընդառաջ գնալով և այն մարտահրավերներին, որոնց դեմ գտնվում էր Հայոց Եկեղեցին, հայոց գրերի արարմանը հաջորդած թարգմանական հսկայածավալ գործունեությամբ, շնորհիվ որի ժամանակի արժեքները ներառնվեցին ազգային մեր կյանքում: Այս ամենը նրանք կարողացան կատարել՝ առաջնորդվելով առաքյալի պատգամով. «Սէր ոչ երբեք անկանի»: Նրանք իրենց հոգում բոլորանվեր կրում էին սերը հանդեպ Աստված, հանդեպ Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը:*

*Ահա այս սերն է, որ նաև այսօր մեզ պիտի առաջնորդի հաղթանակների ներկա ժամանակների մարտահրավերների հանդեպ: Եթե մեր զավակունք, որոնք*

*խորհրդանշանակորեն նոր ժամանակաց թարգմանչաց խումբն են՝ դուք, որ եկույթ ունեցաք այստեղ, և նրանք, ովքեր ուսանում են տարբեր երկրների համալսարաններում, և նրանց շարքերը գնալով ստվարանում են, եթե դուք բոլորդ նույն սիրով ու նախանձախնդրությամբ, Թարգմանչաց ոգով ուսում առնեք և այն կիրառեք հայ կյանքից ներս՝ նորոգելու հայ կյանքը, զորացնելու հայ կյանքը և պայծառ ու շեն դարձնելու այն: Այրեմն այդ պարզամն ու խորհուրդը կրենք մեր հոգիներում և առաջնորդվենք մեր պատմության մեջ մեզ տրված լավագույն դասով, ես վստահ եմ, որ Անդծո օրհնությունը միշտ մեզ հետ պիտի լինի, և մենք կկարողանանք դիմագրավել բոլոր մարտահրավերներին:*

*Մենք ունենք Հայոց Դարձի 1700-ամյա պատմություն, ուր նաև մշակված են և բանաձևված են այն արժեքները, որոնց վրա խարսխելով մեր կյանքը, որոնց ապավինելով մենք պետք է կարողանանք ներկա ժամանակների մարտահրավերների դեմ վստահորեն կանգնելու, վերցնելու այն, ինչ որ բարիք է համաշխարհայնացման այս նոր երևույթում, և մերժելու ու վանելու մեզնից հեռու այն ամենը, որ կարող են վտանգել մեր ազգային ինքնությունը, մեր ազգային հոգեբանությունը, մտածողությունը, նկարագիրը և մեր ազգային արժեքային համակարգը»:*

Գիտաժողովի ընթացքում լսվեցին նաև «Համաշխարհայնացման զարգացումները. ծրագրեր եւ գործընթացներ» (պրոֆ. Դոնալդ Միլլեր, ՀԿՀ Կրոնի և հասարակական մշակույթի կենտրոն), «Համաշխարհայնացման ազդեցությունը Հայ Եկեղեցու վրա. Գնահատականներ» (Տ. Վազգեն քհն. Մովսիսյան, Գլենդեյլի Ս. Պետրոս եկեղեցու երիտասարդական կենտրոնի հոգևոր հովիվ), «Նոր ծրագիր Հայոց Եկեղեցու համար, ընդունել մարտահրավերները» (պրոֆ. Հրայր Դեքմեջյան, ՀԿՀ հայագիտության կենտրոնի տնօրեն, Քաղաքական գիտությունների ամբիոն):

Բանախոսություններից հետո տեղի ունեցավ քննարկում հյուրերի և համալսարանի ուսանողների մասնակցությամբ: Գիտաժողովն ավարտվեց Նորին Սրբության օրհնության խոսքով:

Գիտաժողովի վերջում համալսարանականները Վեհափառ Հայրապետին նվիրեցին հայկական մանրանկարչության ոճով Ս. Էջմիածնի հիմնարկումը ներկայացնող մի կտավ:

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Դիմավորվելով տեղի հայության կողմից՝ Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ով առաջնորդվեց եկեղեցի, կատարելու Սուրբ Սեղանի խաչքարի և եկեղեցու սրբանկարների օծումը:

Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 1963 թ.: 2003 թ. որոշվում է եկեղեցու տեղում նոր եկեղեցի կառուցել: 2004 թ. զցվում են նոր եկեղեցու հիմքերը: Շինարարությունն ընթանում է հսկողությամբ տեղի հոգևոր հովիվ Տ. Ջավեն ավագ քահանա Արզումանյանի:

2004 թ. ապրիլի 25-ին կատարվում է եկեղեցու հիմնաքարերի օծումը՝ 20 կնքահայրերի մասնակցությամբ:

Արդեն օծվել և իրենց տեղերում են դրվել եկեղեցու գմբեթի և զանգակատան խաչերը:

«Հրաշափառ»-ի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը օծեց նորակառույց եկեղեցու Սուրբ Սեղանի խաչքարը, ապա հաջորդաբար օծեց Ս. Աստվածածնի, Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի, Ս. Սահակ Հայրապետի և Ս. Մեսրոպ Մաշտոցի սրբանկարները:

Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Զավեն ավ. քհն. Արզումանյանի խնդրանքով Նորին Սրբությունը օրհնեց 20 խաչեր, որոնք պետք է դրվեն նորակառույց եկեղեցու մեջ:

Արարողության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայ Եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան հանձնեց թեմական խորհրդի նախկին ատենապետ Ռիչարդ Մուշեղյանին՝ ընդառաջելով թեմակալ առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տեր-յանի խնդրանքին, ի գնահատություն Ռ. Մուշեղյանի երկարամյա ծառայության ԱՄՆ հայոց Արևմտյան թեմին և Ալֆրեդ ու Մարգարիտ Հովսեփյան վարժարանին:

*«Ավելի քան երկու տասնամյակ Դուք եղել եք Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու Ալֆրեդ և Մարգարիտ Հովսեփյան վարժարանի հոգաբարձության ատենապետը՝ անձնվազ ոգևորությամբ ի սպաս դնելով Ձեր ողջ կարողությունները ի նպաստ կրթօջախի աստվածահաճո գործունեության, որպեսզի Մաշտոցյան լեզուն կենդանի մնա հայ մանուկների շուրթերին, և հայորդիները Միացյալ Նահանգներում շարունակեն ապրել հավատարիմ մեր հայրերի լույս հավատքին ու հայրենյաց ժառանգությանը և այդ արժեքներով գտնեն իրենց կյանքի ուղին:*

*Հայրենասեր ու ազգասեր ոգով Դուք Ձեր ավանդն եք բերում նաև Ամերիկայի Հայկական Համագումարի կողմից կյանքի կոչվող համազգային ձեռնարկների իրականացմանը:*

*... Վստահ ենք, որ Մայր Եկեղեցու հանդեպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակվեն արդյունավորվել աստվածահաճո նորանոր ձեռնարկներով՝ ի շահ սիրեցյալ մեր ժողովրդի և ի զորացումն ազգային-եկեղեցական մեր կյանքի»*,- ասվում է Հայրապետական Սրբատառ Կոնդակում:

Հավարտ շքանշանի հանձնման արարողության գեղարվեստական հայտագրով հանդես եկան վարժարանի սաները: Ապա հայրապետական իր օրհնությունն ու պատգամը ծխականներին ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այնուհետև ընդունելություն կազմակերպվեց եկեղեցուն կից «Աղաջանյան» սրահում: Տեղի հայ համայնքի կողմից Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք ասաց Խաժակ Գոնալյանը, ԱՄՆ և Հայաստանի Հանրապետության օրհներգները կատարեցին Գարի Մուշեղյանը և Հակոբ Կակոսյանը:

Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք ասացին նախ ծխի հոգևոր հովիվ Տ. Զավեն ավ. քհն. Արզումանյանը և ծխական խորհրդի ատենապետ դոկտ. Գուրգեն Մաթևոսյանը:

Հովսեփյան վարժարանի ուսանողները երգեցին «Իմ Հայաստան», «Ով մեծասքանչ» և «Էրեբունի-Երևան » երգերը:

Եկեղեցու կառուցման հանձնախմբի ատենապետ Նիլս Լամպաճյանը հույս հայտնեց, որ եկեղեցին կկառուցվի և կօծվի համաձայն եկեղեցու կառուցման հաստատված ժամանակացույցի:

Թեմակալ առաջնորդ Հովնան Սրբազանը Արևմտյան թեմի «Հայ ոգի» շքանշանով պարգևատրեց Խաժակ Գոնայանին՝ առ ի գնահատություն իր մատուցած երկարամյա նվիրյալ ծառայության:

«Քրիստոս փառաց թագաւոր» շարականի դաշնամուրային կատարմամբ հանդես եկավ Լևոն Աբրահամյանը:

Այս հանդիպմանը ներկա էին Լոս Անջելեսի քաղաքապետ Անտոնիո Վիլարայակոսան և Գլենդեյլի քաղաքապետ Ռաֆֆի Մանուկյանը, որոնք գնահատագրեր հանձնեցին Նորին Սրբությանը:

Հանդիպմանը ներկա էր նաև ՀՀ գլխավոր հյուպատոս Գագիկ Կիրակոսյանը: Ծխական համայնքի ատենապետ դոկտ. Գուրգեն Մաթոսյանը ծխի կողմից Նորին Սրբությանը, որպես Աջհամբույր, նվեր հանձնեց 12000 դոլարի մի չեկ՝ ի նպաստ Մայր Աթոռի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի:

Հանդիսությունը եզրափակվեց առաջնորդ Սրբազանի, ապա Վեհափառ Հայրապետի խոսքերով: Նորին Սրբությունը բարձր գնահատեց նոր եկեղեցու կառուցման ծխի նախաձեռնությունը, շեշտեց որպես աղոթքի տուն եկեղեցու կարևորությունը և մաղթեց, որ նման կառուցումներ հաճախակի կատարվեն:

**11 հունիսի**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով իր Հովվապետական այցը Լոս Անջելեսի շրջանում, Հովնան արքեպս. Տերտերյանի և Հայրապետական շքախմբի անդամների ուղեկցությամբ մեկնեց Ֆրեզնո: Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին շրջանի հայ եկեղեցականները, ծխական խորհուրդների, փիկնանց և երիտասարդական միությունների ներկայացուցիչները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ողջունեց թեմակալ առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը՝ շեշտելով, որ Հայրապետական այցելությունը հոգևոր վերանորոգման պահեր է պարգևում ամենքին:

Ապա հավաքվածներին իր պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը գոհություն հայտնեց Բարձրյալին՝ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ երկրորդ այցելության համար: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու առջև ծառացած խնդիրներին և վստահեցրեց, որ միայն միացյալ ջանքերով է հնարավոր հաղթահարել դրանք: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, բարձր գնահատելով Ֆրեզնոյի հավատացյալների կենդանի հավատն ու նվիրումը, հորդորեց՝ հավատարիմ մնալ քրիստոնեական հավատին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և մեր մշակութային ժառանգությանը:

Այնուհետև եկեղեցու շրջափակում գտնվող սրահներից մեկում Հայոց Հայրապետը հանդիպեց Ֆրեզնոյի տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչներին՝ սիրով պատասխանելով Հայոց Եկեղեցուն և Հայաստանին վերաբերվող նրանց հարցերին:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց Կենտրոնական Կալիֆոռնիայի տարբեր շրջաններից եկած հայ երիտասարդների հետ:

Նորին Սրբությունը պատասխանեց երիտասարդներին հուզող բազում հարցերի՝ հոր-
դորելով շարունակել իրենց նվիրյալ ծառայությունը Հայ Եկեղեցուն և ԱՄՆ հայոց Արև-
մտյան թեմին:

Այս հանդիպումը կազմակերպել էին Կարինե Գարագաշյանը և Եկեղեցու տիկնանց մի-
ությունը:

Երեկոյան Վեհափառ Հայրապետը Ֆրեզնոյի «Հայկ Պերպերյան» սրահում հանդիպեց
Հայրապետական շքախմբի ընդունելության հանձնախմբի անդամների, ինչպես նաև պատ-
բեր տարիներին Հայրապետական շքանշաններ և Օրհնության գրեր ստացած ազգայիննե-
րի հետ՝ շուրջ 120 հոգի: Ներկա էին նաև մի շարք այլ հրավիրյալներ:

Ընդունելությունը եզրափակվեց գեղարվեստական հայտագրով, որի ընթացքում հնչած
երգերը ուղեկցվեցին Ռոբերտ Ամիրխանյանի դաշնամուրային կատարումներով:

Երեկոն կազմակերպել էին Պարլը սրկ. Տեր-Մկրտչյանը և Կենտրոնական Կալիֆոռնի-
այի Տիկնանց օժանդակ մարմինը:

**12 հունիսի**

Կեսօրին, ժամը 12-ին, մասնակցությամբ Ֆրեզնոյի Ս. Պողոս եկեղեցու, Ֆաուլըրի Ս. Գրի-
գոր Լուսավորիչ հայոց եկեղեցու, Ռիտլիի Ս. Սահակ-Մեսրոպ հայոց եկեղեցու, Եդենի Ս.
Աստվածածին հայոց եկեղեցու և Թըրլաքի Սուրբ Խաչ հայոց եկեղեցու հոգևոր հովիվների,
Արիզոնայի հայոց եկեղեցու այցելու հոգևոր հովիվ Տ. Շահե ավ. քհն. Ալթունյանի և համ-
գըստյան կոչված Տ. Արթուն ավագ քհն. Սմբատյանի և վերոհիշյալ եկեղեցիների սարկա-
վագների ու միացյալ դպրաց դասի, Վեհափառ Հայրապետը, իր կողքին ունենալով առաջ-
նորդ Սրբազան Հորը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանին և Տ. Վաչե արքեպս. Հովսեփ-
յանին, «Հրաշափառ»-ի արարողությամբ մուտք գործեց Ֆրեզնոյի Ս. Պողոս եկեղեցի, որի
հոգևոր հովիվն է Տ. Արշեն ավագ քհն. Այվազյանը:

Ս. Պատարագին ներկա էր Ֆրեզնոյի Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Ջոն եպս. Սթեյն-
բեկը: Դիմելով հավաքված ժողովրդին՝ թեմակալ առաջնորդ Հովնան Սրբազանը ասաց.
*«Վեհափառ Հայրապետ, բոլորիս սրտերը երախտագիտական զգացումներով
լեցված է այս առավոտ, որովհետև Ձեր խոսքի մեջեն կհառագայթե Մայր Աթոռ
Սուրբ Էջմիածինը և սիրո զգացումներով լեցուն Ձեր սիրտը կուգա նաև նոր
կյանք բաշխելու հավատավոր մեր ժողովուրդին, որպեսզի նաև իրենք այս քա-
ղաքի մեջ և քաղաքի մերձակա շրջաններու մեջ ապրող մեր ժողովուրդը շարու-
նակե ապրիլ մեր հայրերու հավատքով, մեր հայրերու ավանդույթներով, միշտ
հավատարմությամբ լեցուն դեպի Մայր Հայրենիքը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիա-
ծինը:*

*Անցնող տասը օրերը, ավելի քան տասը օրերը Արևմտյան մեր թեմի զավակ-
ներու համար, հատկապես հարավային շրջանի մեր Եկեղեցու զավակներու հա-
մար և այսօր այստեղ և առաջիկա օրերուն Սակրամենտոյի, Արիզոնայի և Սան
Ֆրանցիսկոյի մեր ժողովրդի զավակներու համար պիտի ըլլան պատմական*

*օրեր, հավատքի վերազարթոնքի օրեր, և Դուք պիտի շարունակեք Ձեր հայրական օրհնությունները բաշխել մեր Սուրբ Եկեղեցու զավակներուն:*

*Մենք ականատես եղանք պետականիրզներու միջոցով այն հրաշալի աշխատանքին և առաքելական գործունեության, որ Դուք ծավալեցիք անցնող հինգ տարիներու ընթացքին, և գիտենք, որ գալիք տասնամյակները ավելի արդյունաշատ պիտի ըլլան գործունեության իմաստով, առավել հույս և երազ ներշնչելով մեր ժողովրդի զավակներուն»:*

«Աղոթում ենք Սփյուռքի զորացման համար», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ իր օրհնությունը բաշխելով արարողությանը ներկա հավատացյալ հայորդիներին և հորդորելով նրանց՝ հավատարիմ մնալ Հայ Եկեղեցուն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՖՐԵԶՆՈՅԻ Ս. ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

*«Ասպուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից եւ տես, այց արա այգւոյս այսմիկ եւ դարմանի դար ամա զոր տնկեաց Աջ Քո»:*

**(Սաղմ. Հթ 15-16)**

**Փառք և գոհություն ենք մատուցում Ամենաբարձրյալ Տիրոջը, որ Մեզ շնորհը պարգևեց Հայրապետական այցելությամբ կրկին լինելու Ամերիկայի Միացյալ Նահանգների օրհնյալ այս երկրում՝ հաղորդվելու ձեզ հետ և բերելու ձեզ համայն հայության Սրբազնասուրբ Էջմիածնի և Մայր Հայրենիքի սերը, օրհնությունն ու հայրենաբույր շունչը: Բերելու և միախառնելու ձեր կյանքին, որպեսզի ձեր անհուն սերն ու կարոտը մեր Մայր Հայրենիքի հանդեպ լիանան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնություններով, որպեսզի միշտ արթուն ու անսասան լինեն ձեզանում ազգային ոգին ու գիտակցությունը, և առավել զորանա ձեր ջերմ սերը հանդեպ Աստված և առ Եկեղեցին մեր Սուրբ:**

**Մեր հոգում անթեղած ձեզ բերել ենք նաև լույսն ու օրհնությունը փերունակոխ սուրբ վայրերի՝ Տիրոջ Ծննդյան, Հարության ու Համբարձման սրբապեղիների, որտեղ հայրենաբնակ հավատավոր Մեր զավակաց հետ ուխտագնացությամբ եղանք շուրջ մեկ ամիս առաջ և Մեր աղոթքը սրբազան այդ երկրում, փերունակոխ սուրբ վայրերում առ Աստված բարձրացրեցինք համայն հայ ժողովրդի բարօրության ու մեր Եկեղեցու և մեր Հայրենիքի շինության ու պայծառության համար:**

**Մենք աղոթք բարձրացրեցինք Սփյուռքի հայ կյանքի զորացման համար, որպեսզի ապրի աշխարհասփյուռ ազգս հայոց հասպատուն Լուսավորչի սուրբ աջին և զորացյալ կանթեղի լույսով լուսավորչահասպատ:**

Այսօր Փրեզնոյի Սուրբ Պողոս եկեղեցու կամարների ներքո, Սրբազան Պատա-
րագի այս նվիրական պահին, վերստին Մեր հոգու հայցն ենք բարձրացնում առ
Աստված և ասում. «Աստուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից եւ տես, այց արա
այգւոյս այսմիկ եւ դարման տար սմա զոր տնկեաց Աջ Քո»:

2000 տարիներ առաջ Սուրբ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչու-
թյամբ հիմնվեց ու նրանց մարտիրոսյալ արյամբ ոռոգվեց Քրիստոսահիմն մեր
Սուրբ Եկեղեցին: Որպես այգի աստվածատունկ՝ Եկեղեցին մեր Սուրբ կենսաբեր
շնորհներով լուսավորված, իր պտուղները բաշխեց հայ հավատացելոց՝ հայոց
ազգի առջև բացելով Երկնքի Արքայության դռները և Միածնի լուսավորչատեսիլ
էջքով լուսավորելով մեր պատմության հորիզոնները: Տիրոջ բյուր պարգևներն ըն-
դունեց մեր ժողովուրդը և քրիստոնեական իր գոյության դժվարին ու ճակատա-
գրական պահերին, Աստծո հայրական Աջով հաստատյալ Եկեղեցու շնորհաստիյուռ
զորությունն առնելով, գտավ հույս ու աղոթքով հաղթանակ վշտի մեջ և օրհասի
մեջ՝ վերածնունդ ու հարություն: Այսպես ապրեց ու հարատևեց ազգս հայոց՝ իրեն
ընծայված երկնառաք շնորհներն ու պարգևները առատորեն արգասավորելով:

Այս տարի մենք նշում ենք Հայոց Այբուբենի ստեղծման և Աստվածաշնչի հայե-
րեն թարգմանության 1600-ամյակը, որ պտուղներից մեկն է «այգւոյն, զոր տնկեաց
Աջն Աստուծոյ», և որն ամենքիս առավել նախանձախնդրության և հավատարմութ-
յան կոչ է անում հանդեպ մեր լեզուն ու հոգևոր ազգային մեր արժեքները: Այս տա-
րի մենք ոգեկոչում ենք նաև 90-ամյա տարելիցը Հայոց Մեծ եղեռնի, մեր սրտերից
աղոթք բարձրացնելով մեկ ու կես միլիոն մեր անմեղ զոհերի հոգվոց խաղաղութ-
յան համար: Գիտենք, որ ազգերի պատմությունը կերտվում է թե՛ ուրախ և թե՛ ող-
բերգական իրադարձություններից, սակայն այդ ուրախությունների ու դժբախտու-
թյունների ճիշտ վերապրումն է , որ կերտում է ազգի հաղթանակող ոգին: Այսօր
հայորդյաց հոգիներում Մենք տեսնում ենք այդ հաղթանակող ոգին, որով զորա-
ցած հայ ժողովրդի զավակները, պայքարում են հանուն հայության արդար դատի
հաղթանակի:

Միրո շնորհի ու եղբայրական զորակցության կենսագործումներով դժվարութ-
յունների ու փորձությունների դիմագրավեց ազգս հայոց նաև մեր օրերում: Դժվա-
րին օրեր, ամիսներ ու տարիներ ապրեցին Հայաստանի Մեր զավակունք, բայց մեր
նախնյաց քաջալերող օրինակով չվհատվեց մեր ազգը իր տանջանաց ու փորձա-
նաց մեջ. «Զի ո՛չ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զաւրութեա՛ն, եւ սիրոյ,
եւ զգաստութեան»: Այդ զորության, զգաստության ու սիրո ոգով Սփյուռքի Մեր
զավակունք թեթևացրեցին կրած նեղությունների բեռը հայրենաբնակ իրենց քույ-
րերի ու եղբայրների՝ մատուցած բազում ծառայություններով այսօր ևս շարունակե-
լով սիրառատ զորակցությունը Արցախին և Հայաստանին: Զորության ու միաբա-
նության այդ ոգով մեր ժողովուրդը արդար պայքարի ելավ արցախյան ազատա-
մարտում՝ պաշտպանելով ազատ ապրելու իր իրավունքը և իր հաղթարշավը պսա-
կեց Շուշիի պատմական ազատագրումով:

Այսպես ազգս հայոց աստվածատուրն այգուց կննաց պտուղներ առնելով՝ իր նախնյաց հավատքը, նվիրումն ու անմնացորդ զոհաբերումի ոգին սերնդեսերունդ հասցրեց մեր ժամանակներում ապրող նվիրյալ հայորդիներին:

Գոհություն Բարձրյալին, որ Քրիստոսապատվեր իր առաքելագործությամբ մեր Սուրբ Եկեղեցին ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի շարունակում է հավատի նոր հունդեր սերմանել հայորդյաց սրտերում ու հոգիներում, որպեսզի ազգային-եկեղեցական մեր անդաստաններում հոգևոր վերազարթոնքով ու վերածաղկումով հասունանան նոր պտուղները համայն հայության հավատքի վերածննդի: Արդարև, դժվարին ժամանակներից հետո հոգևոր զարթոնք է ապրում ազգս հայոց ու վեր պարզած հավատի իր պայծառ ջահը՝ աստվածահաճո առաքինագործություններով ու նոր աշխույժով է լցնում ազգային-եկեղեցական իր կյանքը: Եվ երկնքից մեր ժողովրդին հանապազ օրհնություն են իջեցնում մեր եկեղեցիներից «ի բարձունս Աստուծոյ» ելնող հանապազ աղոթքները. «Տեր Աստված զորության, դարձիր, նայիր քո ժողովրդին և մշտապես Քո խնամքի ներքո պահիր Քո իսկ կողմից հաստատված մեր Սուրբ Եկեղեցին»:

Այս աղոթական ոգով շաղախված մեր միասնությամբ է, որ պահպանեցինք մեր հավատն ու սերը Քրիստոսին չարչարանակից լինելու նեղ և անձուկ ճանապարհներին, և այսօր ծաղկում են ազգիս ուսամբարձ խաչերը՝ մխիթարության պտուղներ տալով, քանզի ինչպես առաքյալն է ասում «Եթէ որպէս կցորդ ե՛մք չարչարանացն, նոյնպէս եւ մխիթարութեանն» (Բ Կորնթ. Ե 7): Եվ մեր մխիթարության ու պարգևների համար այսօր օրհնաբանում ենք Ամենակալ Տիրոջը՝ հրեշտակային երգակցությամբ բարձրաձայնելով. «Փառք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղություն, և հաճություն մարդկանց մեջ»: Փառք Աստծուն ի բարձունս, որ հայրենի մեր երկիրը իր ժողովրդի ստեղծագործ ու խաղաղ աշխատանքով ծաղկում և պտղաբերում է՝ մասնակից նաև աշխարհի ընդհանուր զարգացման ու համամիասնության ընթացքներին:

301 թվականին Հայաստանում քրիստոնեության պաշտոնականորեն ընդունումից ի վեր հայ ժողովուրդը քրիստոնեական մշակույթի կենսաբեր և կենսառատ ակունքներից ըմպելով, նրանից ընձյուղված գործերով հարստացնում է մարդկային քաղաքակրթությունը՝ համաքրիստոնեական արժեքների ու հասկացությունների շրջագծում մշտապես դրսևորելով իր ազգային ինքնությունը: Հեռու մեզանից ամեն տարակույս, որ գուցե աշխարհի համընդհանրության մեջ սասանվի այգին Հայաստանյայց և արգասավոր ավանդները նրա փոխարինվեն հոգևոր-պատմական ակունքներ չունեցող և արդի աշխարհի նյութականությամբ պայմանավորված մի յուրօրինակ համամշակույթով, որի մեջ հայությունը միայն մի փոքրիկ բաղադրիչ կլինի:

Մեր ժողովուրդը մերժելով մերժել ու պիտի մերժի մեր ավանդական արժեքներին, բարոյական ըմբռնումներին ու քրիստոնեական աշխարհայացքին անհարիր դրսևորումները և պիտի շարունակի հավատարիմ իր ընթացքը մեր հայրերի սուրբ հավատքին, Եկեղեցու նվիրական կանոններին ու օրենքներին և հաստատված ավանդույթներին, որոնցով պիտի զարդարի նաև համայն մարդկության հոգեմտա-

վոր գանձարանը իր թանկագին գոհարներով: Արդի համընդհանրության գործընթացները կարող են համամարդկային նպատակների ծառայել, սպեղծել մնայուն ու ժողովուրդներին փոխադարձաբար իրար կապող արժեքներ ոչ թե ազգային մշակույթների փարբերակիչ հատկանիշների ոչնչացմամբ, այլ մշակութային ու արժեքային հաղորդակցությամբ և փոխհարսպացմամբ:

Սիրելի հավատավոր հայորդիք, Հայրապետական Մեր պատգամն ենք բերում ձեզ, որպեսզի ձեր հոգու հայացքը հառած Մայր Հայրենիքին և Սուրբ Էջմիածնին, շարունակեք ապրել ձեր ազգային անգին ու նվիրական արժեքներով՝ հավատով, լեզվով, կրթությամբ և հայկական մշակույթով: Յուրաքանչյուր հայ այսօր պետք է քաջ գիտակցի, որ պարտավորություն ունի ողջ հայության առջև, քանզի չնայած մենք սփռված ենք ողջ աշխարհով մեկ, բայց մենք մի ազգ ենք, մի «տուն Թորգոմայ» և մի Եկեղեցի, «զոր տնկեաց Աջն Աստուծոյ»:

Համայնավարության բռնատիրական և հալածանաց ժամանակների հողմերը փորձեցին սասանել այս տունը, երկփեղկել Հայոց Եկեղեցին: Եվ մեր ժողովուրդն ակամա կանգնեց այս փխուր իրողության առջև, պառակտվեց միասնությունը մեր Եկեղեցու, հակականոնական ընթացքներ տեղ գտան եկեղեցական մեր կյանքից ներս: Մենք սակայն վստահ ենք, որ Աստծո շնորհով և մեր հավատացյալ ողջ ժողովրդի զորակցությամբ պիտի վերացնենք պառակտման վտանգը և հավերժ պահպանենք մեր Սուրբ Եկեղեցու դարավոր միասնությունը: Պիտի պահպանենք Հայ Եկեղեցու ավանդույթները, նվիրական կարգն ու սարքը և կանոնները անխաթար ու անսասան, որովհետև այսպես միայն զորեղ է Հայոց Եկեղեցին, այսպես միայն երաշխավորված է մեր ժողովրդի ընթացքը դեպի հազարամյակներ: Քանզի Հայ Եկեղեցին հենց ինքը հայ ժողովուրդն է՝ քրիստոնեական սուրբ հավատքով միասնական և ինքն իրեն Հայ Եկեղեցիով միաբան ճանաչող ու իր միաբանությամբ արտահայտվող:

Արդ, սիրելիներ, յուրաքանչյուրիս անհատական և բոլորիս հավաքական ուժը պիտի ուղղված լինի մեր միասնությանն ու փոխադարձ զորակցությանը, մեր ազգային արժեքների, նվիրական սրբությունների պահպանությանը, որպեսզի կարողանանք իրականացնել մեր ընդհանրական նպատակը, այն է՝ հաղթանակ հայոց կյանքի, վերածնունդը ողջ հայության: Մեր հայրերը արդար ու շինարար աշխատանքով, տքնանքով, ստեղծագործ երկունքով են ճանաչելի դարձրել մեր ազգը ողջ աշխարհին՝ իրենց վաստակով ու արարումներով փառքի էջեր արձանագրելով հայ ժողովրդի և համայն մարդկության պատմության մեջ:

Այսօր մենք շնորհն ունենք շարունակելու փառքի այդ ճամփան՝ ներդնելով մեր կարողությունները հանուն ազգային մեր երազների իրականացման: Սիրելի զավակներ Մեր, ձեր եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը կպակեք նաև ձեր որդվոց, որպեսզի մատաղ հոգիների հայացքի առջև միշտ վերհառնած լինեն համայն հայության հավատքի Բեթղեհեմ, Տերունական Աջով հաստատված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Մասսյաց փեշերին բազմած մեր Հայաստան աշխարհը:

Հավատում ենք, որ այլևս հոգևոր հաղթանակի պայծառ օրվա անմայրամուտ արշալույսն է բացվել հայ ժողովրդի վրա, որը Արդարության Արեգակի շնորհներով մշտապես պիտի լուսավորի աստվածատունկ այգին՝ Եկեղեցիս Հայաստանյայց, որպեսզի Նրա շնորհատու պտուղներով զորացյալ՝ ազգս հայոց ճշմարիտ կյանքով ու աստվածպաշտությամբ շարունակի իր ճամփան դեպի հավիտենություն:

Ի խորոց սրտի Մեր աղոթքն ենք վերառաքում առ Աստված՝ ասելով. «Աստուած զօրութեանց, դարձ հայեաց յերկնից եւ տես, այց արա այգւոյս այսմիկ եւ դարման տար սմա, զոր տնկեաց Աջ Քո»: Թող Տերը մշտապես իր բարի խնամքի ներքո պահի ազգս հայոց և Եկեղեցիս Հայաստանյայց և երկար, քաջառողջ ու արևառատ կյանքի բազում տարիներ շնորհի մեր հավատավոր ժողովրդի զավակաց Ֆրեզնո քաղաքում և այս տարածաշրջանում հաստատելով նաև ազգային-եկեղեցական մեր կյանքի ընթացքը սիրո և խաղաղության շավիղներում:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, Մեզ համար մեծ ուրախություն է, որ այսօր Ս. Պողոս եկեղեցում Սրբազան այս Պատարագի արարողությանը մասնակից և աղոթակից է մեզ մեր քույր Եկեղեցու՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Ֆրեզնոյի Արքեպիսկոպոսը: Մեր ողջույնն ու եղբայրական սերն ենք բերում Մեր հոգևոր եղբորը՝ հայտնելով Տիրոջ զորակցությունը իր առաջնորդական և հովվական առաքելության մեջ:

Մենք հովվապետական Մեր երկրորդ ուղևորության որպես մնայուն օրհնության ակունք բերել ենք նաև Մեզ հետ Սրբալույս Մյուռոնի այս սափորը Սրբալույս Մյուռոնով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որպեսզի այս Մյուռոնով շարունակեք դրոշմել Քրիստոսի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու կնիքը ձեր զավակաց ճակատին, որպեսզի նրանք շարունակեն պահել հավատարիմ ընթացքը մեր հայրերի և զորացնեն ու շենացնեն հայոց կյանքը և Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին հեռավոր ափերում Ամերիկայի Միացյալ Նահանգների: Մենք սիրով ցանկանում ենք Մյուռոնի սափորը փոխանցել ձեր սիրեցյալ ծրաջան առաջնորդին, որի նվիրյալ ծառայությանը Մենք այս օրերին ականատես եղանք և վկան դարձանք: Թող Տերը միշտ եռանդաշատ պահի Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, որպեսզի իր ծառայությամբ միշտ դալար լինի այգին մեր Սուրբ Եկեղեցու, Այգին հայոց կյանքի և բարի ու բազմապատիկ առատ պտուղներ պարգևի՝ ի վայելումն և ի փառս ազգիս հայոց:

***Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:***

Նորին Սրբությունը թեմակալ առաջնորդ Հովնան Սրբազանին նվիրեց Մյուռոնի մետաղյա մի գեղեցիկ սափոր, իսկ Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսին՝ հայկական ոճով պատրաստված մի լանջախաչ, ի պատասխան որի Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդը նվիրեց իր պանակեն:

Հավարտ Ս. Պատարագի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ բազմաթիվ հավատացյալներ ստացան Ս. Հաղորդություն:

Նույն օրը, ի պատիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ֆրեզնոյի նիստերի դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն՝ մասնակցությամբ բանիստերի դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն՝ մասնակցությամբ բարերարների, հավատացյալների, ինչպես նաև ԱՄՆ կրոնական և քաղաքական բարձրաստիճան ներկայացուցիչների և հյուրերի:

Կեսօրին հյուրասիրություն-ընդունելություն տեղի ունեցավ Ֆրեզնոյի Convention Center-ում, որին հրավիրված էին տեղի հայ համայնքի, ինչպես նաև տարբեր Եկեղեցիների և տեղական իշխանությունների ներկայացուցիչները:

Օրվա հանդիսավարն էր Տ. Վարդան ավ. քհն. Գասպարյանը: Հանդիսության ընթացքում ցուցադրվեց Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Մայր Աթոռի գործունեությունը լուսաբանող մի հեռուստաժապավեն:

Հանդիսության ընթացքում խոսք ասաց առաջնորդ Սրբազանը, ապա և Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը մաղթեց, որ այս շրջանի հայությունը հաստատ մնա իր հավատին և ինքնությանը: Հորդորեց, որ հոգևորականները առավել գիտակցականությամբ նվիրվեն ժողովրդի սպասավորությանը, Եկեղեցուն և Եկեղեցու առաքելությանը՝ ամեն ջանք գործադրելով, որ առավել բարգավաճեն այս համայնքները:

**13 հունիսի**

Առավոտյան Ֆրեզնոյի քաղաքապետարանում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ քաղաքապետ Ռոջեր Մոնտերոյի հետ: Վերջինս, ողջունելով և կարևորելով Նորին Սրբության այցը, ներկայացրեց քաղաքապետարանի պաշտոնյաներին և Քաղաքային խորհրդի անդամներին:

Նորին Սրբությունն իր հերթին ուրախություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ հայերը Ֆրեզնոյում հաստատվել են 1898 թ. համիդյան ջարդերից և 1915 թ. Հայոց ցեղասպանությունից հետո: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց, որ այսօր հայորդիների դերը այդ տարածաշրջանում նկատելի է ինչպես գյուղատնտեսության, այնպես և բազում այլ ոլորտներում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև իր գնահատանքը բերելով Կալիֆոռնիայի նահանգի իշխանություններին, այն համոզումը հայտնեց, որ Միացյալ Նահանգները կընդունեն և կդատապարտեն Հայոց Մեծ եղեռնը:

Ի հիշատակ այս հանդիպման՝ քաղաքապետը ապակյա մի հուշանվեր հանձնեց Վեհափառ Հայրապետին, իսկ Նորին Սրբությունը նրան նվիրեց հայ միջնադարյան պատկերագրությամբ փայտյա մի սրբանկար:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և Հայրապետական շքախմբի անդամների ուղեկցությամբ այցելեց Ֆրեզնոյի հայ համայնքի դպրոց, ուր ուսանում են շուրջ 100 երեխաներ:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Ֆրեզնոյի «Ռոթարի ակումբ» միջազգային բարեգործական կազմակերպություն: Նորին Սրբության այցը համընկավ ակումբի հաստատման 100-ամյակին:

Շուրջ 200 հրավիրյալներին Ամենայն Հայոց Հայրապետը ներկայացրեց հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու անցած պատմական ուղին՝ անդրադառնալով պատմության նշանակալի



ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԿՈՍՏԱ ՄԵՍԱՅԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻՆ



ԱՂՈՒՀԱՑՈՎ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՖՐԵԶՆՈՅԻ Ս. ՊՈՂՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԿԱՐԳ ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԵՐՅԱՆԻ ՇԻՐՄԻՆ·

հանգրվաններին: «Մենք հավատում ենք, որ խաչելությանը հարությունն է հաջորդում»,- ասաց Նորին Սրբությունը՝ վստահեցնելով, որ հայ ժողովուրդը համախումբ պիտի շենացնի ու պայծառացնի իր Հայրենիքը և Եկեղեցին:

Հանդիպումն ավարտվեց «Պահպանիչ» աղոթքով:

Ժամը 14-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Կենտրոնական Կալիֆոռնիայի մանկական հիվանդանոց:

Ժամը 16-ին Ֆրեզնոյում Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ հոգեհանգստյան պաշտոն կատարվեց Սողոմոն Թեհլերյանի շիրմի մոտ: Հավարտ հոգեհանգստյան Նորին Սրբությունը, խոսելով Սողոմոն Թեհլերյանի մասին, ի մասնավորի ասաց. *«Մեզ համար մեծ մխիթարություն է, որ Հայոց Մեծ եղեռնի 90-ամյակի ոգեկոչման այս օրերին կանգնած ենք մեր ժողովրդի հերոս զավակի շիրմի առջև և աղոթք ենք բարձրացնում իր և 1.5 միլիոն նահատակների հոգիների համար:*

*Սողոմոն Թեհլերյանը վրեժխնդիր եղավ մեր նահատակների համար և հաստատեց, որ Հայոց ցեղասպանությունը չի կարող մոռացվել, և որ ոճրագործները տեղ չունեն այս աշխարհում: Հրեթացու դատավարության նա նան առաջին անգամ դատապարտել տվեց մեր ժողովրդի դեմ գործված այդ ահավոր ոճիրը:*

*Սողոմոն Թեհլերյանը ոգի դարձավ մեր ժողովրդի համար և հավատ ներշնչեց մեր ժողովրդին դեպի արդարությունը, դեպի արդարության հաղթանակը, և մենք հպարտության զգացումով այսօր կանգնած ենք իր շիրմի առջև, քանզի մեր ժողովրդի զավակները կարողացան հաղթահարել, կարողացան ի չիք դարձնել այն ծրագիրը, որը որոճված էր եղեռնը կազմակերպողների ուղեղում՝ ոչնչացնել մի ամբողջ ժողովուրդ:*

*Այսօր, փառք Աստծո, աշխարհացրիվ հայորդիք միախմբվել են մեր Հայրենիքի շուրջ և կառուցում են իրենց նոր կյանքը ինչպես Սփյուռքում, այնպես էլ Հայրենիքում: Եվ մենք վստահ ենք, որ մեր պայքարը հանուն Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման պիտի հաղթանակի, պիտի արձագանք գտնի մարդասեր աշխարհում ու մարդկանց հոգիներում և պիտի հաղթանակի այնպես, ինչպես հաղթանակեց Սողոմոն Թեհլերյանը՝ չարագործության դատապարտմամբ:*

*Թող Տերը օրհնի քաջ հայորդու հիշատակը և միշտ առավել նախանձախնդրությամբ լցնի, որպեսզի կյանքի կոչենք, իրականություն դարձնենք այն երազները, որոնց համար ապրեցին ցեղասպանությունը վերապրած մեր հայրերը՝ կերտելու հզոր Հայրենիք և ապահովելու մեր ժողովրդին խաղաղ և բարօր կյանք:*

*Աստծո սերը և օրհնությունը թող միշտ ուղեկից լինի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի, և Տերը թող առաջնորդի մեզ միշտ արդարության ճանապարհներով»:*

Ժամը 18-ին Ֆրեզնոյի Ս. Պողոս եկեղեցում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի՝ Կենտրոնական Կալիֆոռնիայի ծխական խորհուրդների անդամների և հովիվների հետ:

Կարևորելով նման հանդիպումները՝ Հայոց Հայրապետը խորհրդանշական համարեց իր այցը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ այն պարում, երբ համայն հայ ժողովուրդը նշում է

Հայոց Գրերի Գյուտի 1600 և հիշատակում Հայոց ցեղասպանության 90-ամյակները: «Մենք հարատևել ենք և կշարունակենք մեր ընթացքը, եթե պահպանենք մեր քրիստոնեական և ազգային ինքնությունն ու արժեքները»,- ասաց Նորին Սրբությունն իր խոսքում: «Աստված մեզ հետ է, և մենք պետք է աներկյուղ առաջ ընթանանք»,- ընդգծեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ նշելով, որ մեծ ձեռքբերումների հասնելու համար նախ հարկ է պահպանել մեզ ավանդված ժառանգությունը:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց ծխական և ծխական կյանքին վերաբերվող մի շարք հարցերի:

**14 հունիսի**

Առավոտյան ժամը 9-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Ֆրեզնոյի՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությանը ենթակա Ս. Երրորդություն եկեղեցի, որի հոգևոր հովիվն է Տ. Վահան ավ. քհն. Կոսպանյանը: Հայոց Հայրապետը հավաքվածներին ուղղված խոսքում հորդորեց հավատարիմ մնալ մեր ազգային-հոգևոր ինքնությանը և ազգային միասնությանը՝ ի մասնավորի ասելով. **«Մենք այսօր եկել ենք այստեղ՝ բերելով սերը և օրհնությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և սերը մեր Հայրենիքի և բարեպաշտ հավատավոր ժողովրդի: Մաղթում ենք, որ Աստված Ձեզ պահի և պահպանի մեր հայրերի սրբազան հավատքի մեջ և մեր 1700-ամյա Եկեղեցու օրհնության ներքո:**

**Մեր հորդորն ու պատգամն է ձեզ, որպեսզի շարունակեք Ձեր բարեպաշտ ընթացքը հավատքի և առ Տերը սիրո մեջ: Այս առիթով Մենք ցանկանում ենք և Մեր գնահատանքը բերել մեր բարեջան Տեր Հորը, ով իր սպասավորությունն է բերում Ձեզ Ձեր հավատքի և Ձեր հայաշունչ կյանքի պահպանության համար:**

**Թող Աստված պահի Ձեզ իր օրհնության ներքո, իր սիրո և խնամքի մեջ, և լիահույս ենք, որ Աստված նորից առիթը և շնորհը կպարգևի, որպեսզի Մենք վերստին Ձեզ տեսնենք և Մեր օրհնությունը Ձեզ փոխանցենք այս անգամ Մայր Հայրենիքում և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:**

**Մաղթում ենք, որ Տերը անսասան պահի մեր Եկեղեցին իր ամբողջության մեջ, որ վերանան մեր կյանքից այն բոլոր դժվարությունները, որոնք ժամանակին ծառացան մեր Եկեղեցու առջև և երկփեղկեցին մեր Եկեղեցին: Այս մաղթանքով Մենք աղոթք ենք բարձրացնում Տիրոջը, որպեսզի մենք որպես մեկ ազգ և մեկ Եկեղեցի շարունակենք մեր ընթացքը և մեր ծառայությունը մեր ժողովրդին»:**

Այնուհետև Նորին Սրբությունը հանդիպեց Ֆրեզնոյի Հայ Ավետարանական համայնքի ներկայացուցիչների հետ:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Ֆրեզնոյի Կալիֆոռնիա Համալսարան, ուր գործում է նաև հայագիտության բաժին:

Նորին Սրբությանը նախ ողջունեց հայագիտության բաժնի ներկայացուցիչ Բառլոու սրկ. Տեր-Մկրտչյանը, ապա՝ Համալսարանի ռեկտոր Ջոն Ուելթին, ուրախությամբ նշելով, որ Համալսարանում կան հայազգի ուսանողներ, և այս հաստատությունը բազում կապեր ունի Հայաստանի հետ: Համալսարանի նախագահ Ուելթին Նորին Սրբությանը պարգևատրեց Համալսարանի բարձրագույն շքանշանով:

Ապա Համալսարանի դասախոսական կազմին և ուսանողությանն օրհնության իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հանգամանորեն ներկայացրեց Հայ Եկեղեցու առաքելությունը և ներկայիս ձեռքբերումները մասնավորաբար կրթական ոլորտում: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Համալսարանի ծառայությունը երիտասարդության դաստիարակության և կրթության գործում՝ իր գոհունակությունը հայտնելով հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու հանդեպ դրսևորվող հարգանքի և սիրո համար: Հանդիպման վերջում Հայոց Հայրապետը համալսարանին նվիրեց Արարատի և Ս. Էջմիածնի պատկերներով մի՛ հուշամեդալ:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսի շքախմբի անդամ և Մայր Աթոռի երեց եկեղեցականներից Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և թեմի մի քանի հոգևորականներ այցելեցին Կալիֆոռնիայի ծերանոց: Այստեղ խոսք ասաց Ներսես Սրբազանը՝ ներկաներին փոխանցելով Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի օրհնությունները: Այնուհետև հայ հոգևորականները սենյակ առ սենյակ անցնելով զրուցեցին տարեցների հետ և աղոթեցին նրանց համար:

**15 հունիսի**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սակրամենտոյում առավոտյան հանդիպում ունեցավ Կալիֆոռնիայի նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերի հետ: Նահանգապետը ողջունեց Հայոց Հայրապետի այցը Կալիֆոռնիայի մայրաքաղաք: Նորին Սրբությունը հանդիպումներ ունեցավ նաև քաղաքային իշխանությունների, նահանգի օրենսդիրների և սենատորների, այդ թվում՝ սենատոր Չաք Փուչիկյանի հետ:

Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը հայտնեց նահանգապետ Առնոլդ Շվարցենեգերին՝ Կալիֆոռնիայի նահանգային սենատում Չաք Փուչիկյանի նախաձեռնությամբ ընդունված թիվ 424 բանաձևը ստորագրելու համար, որով Կալիֆոռնիայի նահանգում Հայոց ցեղասպանության ճանաչումը մշտապես գործող օրենքի ուժ է ստացել:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաճատ ծ. վրդ. Յարտմյանը:

Կեսօրին Վեհափառ Հայրապետը հանդիպեց խոշոր ձեռնարկատեր և ազգային բարերար Քըրք Քըրքորյանի հետ: Նորին Սրբությունը բարձր գնահատեց ճանաչված հայորդու գործունեությունը և ի նպաստ Հայաստանի տնտեսության զարգացմանը կատարվող մեծագումար նվիրատվություններն և աջակցությունը: Ի հիշատակ այս հանդիպման՝ Նորին Սրբությունը Քըրք Քըրքորյանին նվիրեց Ս. Էջմիածինը պատկերող արծաթյա մի սկուտեղ:

Երեկոյան ժամը 7-ին Վեհափառ Հայրապետն այցելեց Սակրամենտոյի Ս. Հակոբ հայկական եկեղեցի, որի հոգևոր հովիվն է Տ. Եղիա քհն. Հայրապետյանը: Նորին Սրբությանն ուղեկցում էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և Արևմտյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաճատ ծ. վրդ. Յարտմյանը:

Նորին Սրբության ժամանմանն անհամբերությամբ սպասում էին շուրջ 300 հավատացյալներ: Ամենայն Հայոց Հայրապետը եկեղեցի մտավ «Հրաշափառ», «Էջ Միածինն ի Հօրէ» և «Ուրախ լեր» շարականների երգեցողության ներքո:

Գոհաբանական արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը հավատացյալներին փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ու հայաստանաբնակ իրենց քույրերի և եղբայրների ողջույնները, նրանց հորդորելով հավատարիմ մնալ իրենց հավատքին ու պահպանել կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍԱԿՐԱՄԵՆՏՈՅԻ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

**Ուրախ եմ անչափ, որ Աստուծո ողորմած կամքով գտնվում եմ այստեղ, այս եկեղեցու նվիրական հարկի ներքո, ուր համախմբված են հավատավոր զավակները մեր ժողովրդի, ովքեր ունեն կարոտը և սերը Հայրենիքի և Սուրբ Էջմիածնի, և այդ կարոտն ու սերը Մենք տեսանք, Մենք զգացինք ձեր հայացքների մեջ, ձեր դեմքերին տարածվող ժպիտներում, ձեր դեմքերին արտացոլվող ուրախության մեջ:**

**Երբ մուտք գործեցինք այս եկեղեցուց ներս, տեսանք, որ դուք ցնծություն եք ապրում, ուրախություն եք ապրում, որ ձեր Հայրապետը ձեր մեջ ունեք: Սա մեզ և՛ հոգևոր մխիթարություն, քաջալերություն, և՛ լավատեսության ոգի է ներշնչում, որ այստեղ՝ հեռավոր ափերում Միացյալ Նահանգների դուք տակավին երկար պիտի կարողանաք ապրել որպես ազգի զավակներ այդ սիրո ուժով, այդ հավատքի ուժով, այդ կարոտի զորությամբ: Թող Աստված օրհնի ձեզ, թող Աստված պահիպահպանի ձեզ Իր հովանավոր Աջի ներքո և Իր մշտական օրհնության ներքո:**

**Մենք եկել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, որպեսզի հոբելյանական այս տարում, երբ տոնախմբում ենք 1600-ամյակը Հայոց Գրերի Գյուտի և նաև հիշատակում ենք 90-ամյակը Հայոց ցեղասպանության, ձեզ հետ միասին այս իրադարձությունները նշենք և անդրադարձ ունենանք և այդ իրադարձությունների խորհրդով վերանորոգենք մեր կյանքը և վերանորոգենք մեր ուխտը մեր սրբազան հայրերի սուրբ հավատքի նկատմամբ, մեր ուխտը մեր նահատակ զավակների իղձերի, երազների, տեսիլքների նկատմամբ, որպեսզի մեր կյանքով, որի համար նրանք նահատակվեցին ու զոհվեցին, կարողանանք կերտել այն, ինչի որ նրանք ձգտում էին, ինչ որ նրանք երազում էին: Դա հայի զորեղ կյանքն է այս երկրի վրա, ուր էլ որ հային բախտ վիճակվի ապրել: Դա նաև հզոր Հայրենիքն է, առաջընթաց ապրող Հայրենիքն է, ապահով ու խաղաղ կյանքով ապրող և իր զավակներին երջանիկ, ստեղծագործ օրեր պարգևող Հայրենիքն է: Դա նաև պայծառ ու շեն Հայոց Եկեղեցին է ու մշտապես լույս շողարձակող Սուրբ Էջմիածինը, որպեսզի հավերժ ապրի մեր ժողովրդի հոգում լույս պատկերը Սուրբ Էջմիածնի՝ շողարձակելով հայ կյանքից ներս բարիք և օրհնություն:**



ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ. ԱՐԻԶՈՆԱ



ՍՔՈԹՍԴԵՅԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ԱՐԻԶՈՆԱ

Մենք անչափ ուրախ ենք, որ ձեր շարքերում տեսնում ենք նաև ձեր զավակներին, երիտասարդ դեմքեր այստեղ՝ այս հարկի տակ ներկա, այս հարկի տակ համախմբված: Սա Մեր հոգին, Մեր սիրտը լցնում է առանձնակի ուրախությամբ: Սա նշանակում է, որ դուք ծնողներ եք, ովքեր զավակներին փոխանցում են մեր Հայրենյաց գեղեցիկ ավանդները, մեր Հայրենյաց նվիրական ժառանգությունը, մեր հավատքը, մեր սրբությունը, որպեսզի նրանց հոգին շաղախվի այդ հավատքով և այդ նվիրական ժառանգությամբ, որովհետև այսպես միայն նրանք կարող են հարատև դարձնել հայ կյանքը այսափերում: Այդպես նրանք կարող են ձեր բոլոր բարի իղձերը, ձեր բոլոր գեղեցիկ երազները իրականության վերածել, որպես ազգի նվիրյալ զավակներ, որպես հավատարիմ հայորդիներ մեր պատմության, մեր հավատքի, մեր Եկեղեցու, մեր Հայրենիքի և մեր ժողովրդի:

Մենք Մեր գնահատանքն ենք ուզում այս առիթով բերել ձեր սիրեցյալ առաջնորդին՝ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, որ ծրագրի մեջ ընդգրկեց Մեր այցը դեպի Սակրամենտո, դեպի ձեր այս անուշիկ, քաղցրիկ, այս համեստ, բայց ոգիով, ջերմությամբ, աղոթքով լեցուն աղոթատունը՝ եկեղեցին: Մեր սիրտը իրապես մխիթարություն է ապրում այս պահին և անչափ ուրախ է:

Մենք ուզում ենք Մեր գնահատանքի խոսքը բերել նաև Մեր սիրեցյալ Տեր Հորը՝ Տեր Եղիային, որին ճանաչել ենք, երբ ինքը դեռ հոգևոր ասպարեզում չէր, դեռ պատրաստվում էր, այդ ճանապարհի վրա էր իր քայլերը ուղղած պահում: Մենք ճանաչել ենք իր սիրեցյալ լուսահոգի ծնողին՝ Տեր Գրիգորին, բարեպաշտ մի անձնավորություն, ընտիր մի եկեղեցական, նվիրյալ Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին, որ մեր ժողովրդի ծանրագույն, դժվարին օրերին թողեց փափուկ, հանգիստ իր կյանքը Միացյալ Նահանգներում, եկավ Հայաստան, որպեսզի ապրի մեր ժողովրդի զավակաց հետ, մխիթարի նրանց, զորեպնդի նրանց, նրանց մեջ հավատքը զորացնի և լավատեսության ոգին, ուր նաև Աստուծո կամքով իր մահկանացուն կնքեց:

Մենք ուրախ ենք, որ այդ ծառայասեր, այդ նվիրյալ ծնողի զավակը այսօր շարունակում է իր հոր գործը՝ հովվելով իրեն վստահված հայոց հոտը, և գիտենք, որ նույն նախանձախնդրությամբ, նույն անհուն սիրով ու նվիրումով ինքը իր ծառայությունն է բերում ձեզ: Իր այս նվիրյալ ծառայության վկայությունն է ձեր ներկայությունը այսօր այստեղ, և Մեզ անհունորեն ուրախություն է պատճառում այն հանգամանքը, որ ձեր եկեղեցին լեցուն է, նույնիսկ շատերը դրսում են կանգնած և այնտեղից են լսում Մեր խոսքը:

Մենք ցանկանում ենք Մեր գնահատանքը բերել նաև այս եկեղեցու սպասավորող կազմին՝ դպիր, սարկավագ, երգչախումբ, բոլորին անխտիր, որ աղոթքը միշտ հնչեցնում են այս հարկի ներքո և Աստուծո օրհնությունը, Աստուծո ողորմությունը և Աստուծո շնորհները բազմապատիկ երկնքից իջեցնում մեր ժողովրդի կյանքում, ձեր կյանքում, սիրելի զավակներ, որ ապրում եք Սակրամենտո քաղաքում և այս շրջանում:

Մենք սիրով ուզում ենք ողջունել այստեղ ներկայությունը մեր քույր Եկեղեցու հոգևոր եղբոր, որ եկել է իր հարգանքը և իր սերը դրսևորելու ձեր անձի նկատմամբ,

**փրկավորված է ձեր կյանքով, ձեր հավատ-**
**եկել է Մեզ ողջունելու, որովհետև նա սպասավորի նվիրյալ հովվական ծառայությու-**
**քով, փրկավորված է ձեր եկեղեցու սպասավորի նվիրյալ հովվական ծառայությու-**
**նից: Մենք աղոթող ենք, որպեսզի Տերը միշտ սիրո մեջ պահի ազգությունները և**
**Եկեղեցիները բոլոր, որպեսզի համատեղ ջանքերով օրհնյալ դարձնեն ազգերի**
**կյանքը այս երկրի վրա: Ապահովեն խաղաղ, անվրդով կյանքի օրեր բոլոր ժողո-**
**վուրդներին, որպեսզի մարդիկ ապրեն՝ իրենց ստեղծագործ աշխատանքի բարի**
**վաստակը վայելելով և օրհնելով միշտ Աստծուն այն բոլոր բարիքների համար, որ**
**Տերը պարգևում է մեզ՝ արարածներիս:**

**Թող Աստուծո սերը, շնորհը և խաղաղությունը միշտ լինի ձեզ հետ և Սուրբ Էջ-**
**միածնի օրհնությունը միշտ հովանի ձեզ վրա, Հայրենիքի սերը միշտ ձեր հոգիներ-**
**րում, որպեսզի կարողանաք զորություն և ուժ ունենալ ձեր մեջ՝ հաղթահարելու բո-**
**լոր դժվարությունները, որ կարող են ծառանալ ձեր առջև ձեր համայնքային կյան-**
**քից ներս և ձեր անձնական կյանքից ներս: Աստուծո օրհնությունը թող լինի միշտ**
**ձեզ հետ այժմ և հավիտյանս. ամեն:**

**Սիրելիներ, մեր այս այցելության առիթով մի փոքրիկ հիշատակ ենք ցանկանում**
**թողնել ձեր համայնքին, ձեր եկեղեցուն: Սա Հայաստանի մեր ճանաչված նկարիչնե-**
**րից մեկի գործն է, որը խորհրդանշական ձևով պատկերում է բարձունքի վրա վեր**
**հառնած հայոց հավատքի տունը, որ նաև ունի իր կողքին խոնարհյալ կառույցներ:**
**Այսպես են այսօր Հայաստանում գրեթե մեր բոլոր վանքերն ու եկեղեցիները, ոմանք**
**կանգուն, ոմանք կիսավեր, բայց վստահ ենք, որ Աստուծո օգնությամբ, Մեր զավա-**
**կաց զորակցությամբ պիտի կարողանանք շենացնել այս խոնարհված և կիսավեր**
**եկեղեցիները, որովհետև այսօր ազատ է մեր Հայրենին, և մեր ժողովրդի զավա-**
**կունք նույնպես հնարավորություն ունեն իրենց հոգևոր կյանքը վերարթնության**
**առաջնորդել՝ շենացնելով նաև դարերից մեզ ժառանգություն ավանդված մեր**
**վանքերն ու եկեղեցիները՝ նրանք պահպանելով բարեզարդ և շեն ու կանգուն:**

Այնուհետև եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ Աջհամբույր, որի ընթացքում Նորին Սրբությունը Ս. Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ» աղոթագիրք նվիրեց բոլոր ներկաներին:

Երեկոյան ժամը 21.30-ին Վեհափառ Հայրապետը նախագահեց Պոլսահայերի կազմակերպության կենտրոնի նոր հարկաբաժնի շինության արարողությանը:

Հոգևորականաց հանդիսավոր թափորին դիմավորեցին շարականների երգեցողությամբ, որից հետո Նորին Սրբությունն օծեց խաչքարն ու կատարեց Կենտրոնի բացման արարողությունը:

Պոլսահայ միության վարչության ատենապետն է Սիմոն Աճըլիաչը, որը ողջույնի և բարիգալստյան խոսքով դիմեց Հայոց Հայրապետին՝ ներկայացնելով Պոլսահայ միության գործունեությունը և կատարվող բարեսիրական ծրագրերը, որոնք նպատակադրված են կրթական տարբեր ծրագրերի իրականացմանը թե՛ Ամերիկայում և թե՛ Հայաստանում: Ապա անգլերենով ողջույնի խոսք ասաց միության երկրորդ ատենապետ Էդվին Մինասյանը:

Հովնան Սրբազանը ընդգծեց պոլսահայերի առանձնակի կապվածությունը Ս. Էջմիածնին՝ նշելով, որ այս կենտրոնի ընդլայնման աշխատանքների սկսման արարողության մեծագույն և լավագույն նվերը եղավ Վեհափառի ներկայությունը այս հանդիսությանը:

Հավարտ արարողության իր օրհնության խոսքը ներկաներին ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով պոլսահայերի ծառայությունը Հայ Եկեղեցուն:

Նորին Սրբությանն ուղեկցում էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և Արևմտյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Տաճատ ծ. վրդ. Յարտմյանը:

**16 հունիսի**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանի և հայրապետական շքախմբի անդամների ուղեկցությամբ ժամանեց Արիզոնա: Այստեղ նրանց ողջունեցին Ծխական Խորհրդի ու Տիկնանց Միության անդամները՝ առաջնորդելով Սքոթսդեյլ քաղաքի հայկական եկեղեցի:

Երեկոյան երիտասարդներից և երգչախմբի անդամներից կազմված թափորի ուղեկցությամբ Նորին Սրբությունը մուտք գործեց եկեղեցի: Գոհաբանական արարողության ընթացքում Վեհափառ Հայրապետը աղոթք առաքեց առ Աստված՝ Հայրապետական այցով երկրորդ անգամ Արիզոնայի հայկական եկեղեցում գտնվելու և հավատացյալների ուրախությանն ականատես լինելու համար:

Հայերի առաջին համախմբումն Արիզոնայում տեղի է ունեցել 1957 թ.: 1963 թ. հոկտեմբերի 16-ին թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի կողմից նշանակված «Եպիսկոպոսական հանձնախմբի» ջանքերով պաշտոնապես հիմնադրվեց Մարիկոպա կոմսության հայկական եկեղեցին: Եկեղեցին սեփական տարածքը ձեռքբերեց 1982 թ. Հովսեփյանների ընտանիքի, մասնավորապես օր. Մարգարիտ Հովսեփյանի նվիրատվության շնորհիվ, որը եկեղեցու կառուցման համար հողատարածք նվիրեց:

Շինության հիմքը դրվեց 1991 թ., և շինարարական աշխատանքներն ավարտվեցին հաջորդ տարի, իսկ Հայ Եկեղեցու Մշակութային Կենտրոնի ու «Մելիքյան» սրահի բացումը տեղի ունեցավ 1992 թ. հունվարի 12-ին:

Հայ Կրթական և Սոցիալական Կենտրոնը բացվել է 2000 թ. փետրվարի 12-ին: Կենտրոնի կազմում են Նիկիտ և Էլեոնորա Օրջանյանների գրադարանը, Երիտասարդաց Միության կենտրոնը, ինչպես նաև Տ. Լևոն քահանա և երեցկին Գրեյս Առաքելյանների հիշատակին նվիրված հավաքածուն:

Արարողությանը ներկա էին Սքոթսդեյլ քաղաքի քաղաքային վարչության անդամներ և քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ:

Հավարտ արարողության շարականների երգեցողության ներքո և հավատացյալների հոծ բազմությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը դուրս եկավ եկեղեցուց և առաջնորդվեց դեպի այն վայրը, ուր կառուցվելու է նոր եկեղեցին: Նորին Սրբությունը օծեց խաչքարն ու կատարեց հիմնարկեքի արարողությունը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց համայնքի համար Աղոթքի Տուն ունենալու անհրաժեշտությունը՝ համայնքի անդամներին Տիրոջ խոսքը փոխանցելու և մաս-

նավորաբար երիտասարդ սերնդի հոգում Ավետարանի պատգամները սերմանելու համար:
Նորին Սրբությունը նշեց, որ այս եկեղեցին, ինչպես թեմի մյուս եկեղեցիները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ և Ս. Էջմիածնով Հայրենիքի հետ կապող ոսկե կամուրջ է դառնալու:

Նորին Սրբությունը բարձրորեն գնահատեց բարերարների, շինարարական հանձնաժողովի, ծխական Խորհրդի ու օժանդակ մարմինների անդամների, ինչպես նաև բոլոր հավատացյալների ջանքերը և հույս հայտնեց, որ Աստծու օգնությամբ, թեմակալ առաջնորդի ջանքերով և թեմի հավատացելոց գործակցությամբ շուտով վեր կխոյանա հայկական ոճով առանձնացող այս եկեղեցին:

**17 հունիսի**

Վերադառնալով դարձյալ Կալիֆոռնիա՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիսապետեց Ռանչո Միրաժում, Անապատում գտնվող հայկական եկեղեցու նորակառույց «Քրքյան» սրահի բացման արարողությունը: Այս սրահը կառուցվել է պեր և փիկին Ջորջ և Թամարա Քրքյանների բարերարությամբ: Արարողության ընթացքում կատարվեց նաև այնտեղ կանգնեցված խաչքարի օծումը:

Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեցին ծխի այցելու հովիվ Տ. Ստեփանոս քհն. Դինգիլյանն ու Ծխական Խորհրդի նախագահ պրն Վարուժան Մկրտչյանը:

Տ. Հովնան արքեպս. Տերտերյանն ուրախությամբ նշեց, որ թեմի համար մեծ պատիվ է այն, որ այս սրահի բացման արարողությունը նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այնուհետև իր խոսքը ներկաներին ուղղեց Նորին Սրբությունը՝ բարձրորեն գնահատելով այն ծրագրերը, որոնք նախաձեռնվել են թեմում՝ թեմակալ առաջնորդի ղեկավարությամբ և բարերարների շնորհիվ: Վեհափառ Հայրապետն այդ ամենի մեջ կարևորեց շինարարական հանձնաժողովի, ծխական խորհուրդների ու հավատացյալների դերը և նախանձախնդրությունը՝ իր օրհնությունը բաշխելով ծխի անդամներին ու մասնավորապես պեր և փիկին Ջորջ և Թամարա Քրքյաններին, որոնց բարերարությամբ կառուցվել է Քրքյան ընտանիքի անունը կրող սրահը: Նորին Սրբությունը ասաց, որ այստեղ ինքը եղել է պասը պարի առաջ և զարմացել, որ հայ համայնքը եկեղեցի չունի, և ուրախությամբ նշեց այն փաստը, որ այստեղ շուտով կկառուցվի նաև եկեղեցի: Կարևորելով եկեղեցու շուտափույթ կառուցումը, Նորին Սրբությունը ասաց, որ հայորդին դարերով խոսել է Աստծո հետ, և նաև եկեղեցաշինությամբ է արտահայտվել մեր հավատը, որով ապրել ենք դարեր և այսուհետև ևս ապրելու ենք:

Նորին Սրբության ուղեկցում էին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը և մի շարք հոգևորականներ:

**18 հունիսի**

Առավոտյան Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը մեկնեց Սան Ֆրանցիսկո՝ նախ հյուրընկալվելով թեմի բարերարներից իրավաբան Վարսմ Փոլի կողմից:

Երեկոյան ժամը 7-ին ի պատիվ Վեհափառ Հայրապետի հյուրասիրություն կազմակերպվեց քաղաքի «Մարիոթ» հյուրանոցում, որին ներկա էին Սան Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես, Կուպերտինոյի Ս. Անդրեաս, Օկլենդի Ս. Վարդան և Սակրամենտոյի Ս. Հակոբ



ԿԱԼԻՖՈՌՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԱՌՆՈԼԴ ՇՎԱՐՑԵՆՆԵԳԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

հայոց չորս եկեղեցիների և համայնքների հոգևորականները և ներկայացուցիչները: Երեկոյի հանդիսավարներն էին Տ. Սարգիս քհն. Պետրոյանը և Տ. Տաթև քհն. Հարությունյանը: Հանդիսությունը բարիգալստյան խոսքով բացեց Րաֆի սրկ. Ճորճորյանը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

*«Նայեցեք հին ազգերին և տեսեք՝ ո՞վ հավատաց Տիրոջը և ամոթով մնաց»:*
**(Սիրաքի Իմաստ. Բ 11)**

Սիրելի բարեպաշտ զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու.

Այսօր, երբ Հայրապետ ու ժողովուրդ միասին ենք վերստին, մեր շուրթերին Աստվածաշնչյան այս իմաստությունն է, որը վկայված է մեր ժողովրդի պատմությամբ ու ներկա վերազարթյալ կյանքով: Արդարև, ո՞վ հավատաց Տիրոջը և ամոթով մնաց:

Իր սիրով ու ողորմությամբ Աստված հավատի լույսը շնորհեց մեր հայրերին, հավատի լույսով պահպանեց Արարատի փեշերին, դարեր-դարեր խնամեց ու աշխարհասփյուռ պահպանեց՝ հավատի լույսով առաջնորդելով ազգս հայոց դեպի Սուրբ Էջմիածին: Ընտրեց մեզ լինելու սեփական ժողովուրդ, օրհնեց հավատարմությամբ և բազում հաղթանակներ պարգևեց հավատի զորությամբ: Հավատով սնված ու ջերմացած՝ շքեղորեն ծաղկեց մեր մշակույթը, հավատով անմար մնացին Հայրենիքի ու ազատության սերը մեր ժողովրդի հոգում ու հաղթանակած փայլեցին Ավարայրից մինչև Սարդարապատ ու մեր օրերի Արցախյան ազատամարտերը:

Աստված արժանացրեց տեսնելու մեզ լույսն Իր ողորմության, շնորհն Իր փրկության՝ մահվան ճանապարհներին ապրելու, Մեծ եղեռնը վերապրելու ու վերածնվելու և մեր Հայրենիքի փրկված հողակտորի վրա վերակերտելու ազատ մեր պետությունը և այսօր տեսնելու պայծառ հույսերն ու պարզված հորիզոնները համայն մեր ժողովրդի միավորված կյանքի:

Գոհություն ու փառք մեր Տիրոջն ու Փրկչին, որ հնարավոր դարձրեց Մեր այցելությունը Միացյալ Նահանգներ՝ մխիթարությամբ ու քաջալերությամբ լեցուն օրեր ապրելու ձեզ հետ միասին, Սուրբ Էջմիածնի օրհնությունը բերելու կարոտագին ու սիրառատ ձեր հոգիներին, Մեր պատգամն ու հորդորը՝ հավատի նորոգության ու միասնականության, Մեր հրավերը, որ նույն նախանձախնդրությամբ շարունակեք ձեր ջանքերը բերել մեր Սուրբ Եկեղեցու և մեր Հայրենիքի կյանքին:

Արժանավոր ու հարազատ քաղաքացիներն եք Ամերիկայի և արժանավոր ու հարազատ զավակները Հայաստանի ու Հայ Եկեղեցու: Հպարտ ենք ձեզնով, Ամերիկայում ապրող հայությամբ, որ այստեղ հաստատված ձեր պապերի ու հայրերի օրինակով ստեղծել ու շարունակում եք ստեղծել այն սիրով, որ պարգև ունենք երկ-

նային մեր Հորից, սեր ընտանիքի ու բարեկամի հանդեպ, Ամերիկայի ու Հայաստանի հանդեպ, մեր ժառանգության ու ավանդների հանդեպ, սեր առ Աստված, որ փոքբաթիվ մեր ժողովրդին դարձնում է հավատքով մեծ ժողովուրդ: Մխիթարված է Մեր հոգին՝ տեսնելով ձեզ այսպես միասնական ու համախումբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով, որը մեր ողջ ժողովրդի կյանքի զորությունն ու գոյության խորհուրդն է: Հիրավի, Աստված պարգևեց մեզ Սուրբ Էջմիածինը, որպեսզի նրանով միշտ պայծառ մնա ապրելու հավատը մեր ժողովրդի և մեկ ու անբաժան՝ հար միասնական աշխարհասփյուռ ազգս հայոց:

Այսօր, երբ ազատ է մեր Հայրենիքը, երբ Սուրբ Էջմիածինը կարող է ազատորեն ու գրկաբաց ընդունել իր զավակներին, օրավուր զորանում է Մայր Աթոռի առաքելությունը, որը նույնն էր երեկ, նույնը՝ այսօր և միշտ՝ պահպանել հավատի լույսը, ապրեցնել ազգային արժեքները մեր ժողովրդի հոգում: Դրանցով պիտի անսասթաք առաջնորդվեն վերափոխվող մեր ներկան ու ապագան, որին նայում ենք լավատեսությամբ ու վստահությամբ: Վերազարթոնքի նոր եզերքներ են մեր առջև, ազգային-հոգևոր կյանքի նոր տեսիլքներ, և նոր կյանքով է լեցուն Մայր Աթոռը հայոց:

Սրտի ցավ է մեզ ամենքիս համար, որ այսօր խաթարված է միությունը մեր Սուրբ Եկեղեցու: Եկեղեցական մեր կյանքի բնական առաջընթացը մեծապես կասեցնող այս վիճակը, հավատում ենք, միաբանության ձգտող ոգին մեր ժողովրդի կարող պիտի լինի հաղթահարել: Ներկայիս, ինչպես գիտեք, վերսկսված է երկխոսությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության միջև այս և մեր Եկեղեցին հուզող այլ հարցերի շուրջ: Առաջին հանդիպման ոգին, մխիթարական է մեզ ասել, դրական է և լավատեսական:

Սիրելիներ, այսօր իրավամբ կարող ենք խոսել հաջողությունների ու ձեռքբերումների մասին և՛ Հայրենիքում, և՛ Սփյուռքում: Ֆիլմաշարը, որ տեսաք քիչ առաջ, նույնպես ներկայացրեց այդ հաջողությունները: Դրանք այլևս մերն են և հիրավի, փոքր չեն, սակայն մեր ժողովրդի առջև, այսօր մեր սերնդի ուսերին կարևոր, մեծ ու պատասխանատու առաքելություն է ծանրանում: Մենք կանգնած ենք դեպի Հայաստանի ու Արցախի բարգավաճ, բարօր ու հզոր գալիքը առաջնորդող ճանապարհին ու միասնաբար, համախումբ, աներեր պիտի քայլենք այդ ճանապարհով:

Մենք պիտի հոգանք, որ մեր զավակների համար հայրենյաց ժառանգությունը շարունակի լինել թանկ ու նվիրական, մայրենի լեզուն և Մաշտոցյան Գիրը հարազատորեն խոսեն հայորդյաց հոգիներին, և հավատի լույսը դեպի ուրախություն ու երջանկություն առաջնորդի նրանց կյանքի ուղին: Պիտի կառուցենք Հայրենիքի ու Սփյուռքի ներշաղախ կյանքը՝ ներդաշնակ, զարգացող ու առաջացնաց: Մենք պիտի շարունակենք տեր կանգնել մեր ազգային արդար իղձերին, Արցախի ազատության ճանաչմանը, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը: Պիտի հավատանք ու ջանանք ձեռք բերելու նոր նվաճումներ ու հաղթանակներ՝ հանուն մեր Հայրենիքի ու մեր ժողովրդի, մեր Սուրբ Եկեղեցու պայծառության:

Այսօր շարունակում է առաջնահերթ նպատակ մնալ Հայաստանում և Արցախում մեր խոնարհված բազմաթիվ եկեղեցիների ու վանքերի նորոգությունը, որպեսզի նրանք վերաբացեն իրենց դռները մեր ժողովրդի առջև: Ֆիլմում դուք տեսաք ներկա փլուզված վիճակը մի քանի սրբատեղիների, որ միայն առանձնացված մի մասն են հնագույն, պատմական ու մշակութային մեր մեծարժեք ժառանգության: Ինչպես կառուցել են մեր հայրերը հավատով, մենք պիտի վերականգնենք հավատով և հավատավոր մեր գործերով պիտի շարունակենք վստահությամբ կրկնել. «Նայեցեք հին ազգերին. ո՞վ հավատաց Տիրոջը և ամոթով մնաց»:

Սիրելիներ, տեղին է հիշել, որ այսօր էլ Եկեղեցու գործունեությունը շարունակում է իրականացվել հիմնականում մեր բարերարների ազնիվ նվիրատվություններով: Փառք Տիրոջը, որ արթուն է պահում բարեգործության ոգին Մեր զավակների: Այսօր առիթն ունենք Մեր գնահատանքը բերելու բոլոր բարերարներին, ովքեր զորավիգ են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում: Հավատանք այդ առաքելությանը, որ դարերի փորձություններին է դիմագրավել: Աղոթք ենք բարձրացնում երկինք՝ հայցելով, որ Աստվածային լույսի և օրհնության խորանաշատ դռները միշտ բացված լինեն Հայոց աշխարհի վրա, և միշտ բանուկ լինի դեպի Միածնաէջ մեր Մայր Աթոռը առաջնորդող հայորդյաց ճանապարհները:

Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, բարեպաշտ զավակներ մեր Սուրբ Եկեղեցու, Մենք ուրախ ենք այսօր ողջունելու այստեղ ներկայությունը մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչների՝ ի դեմս Հույն Ուղղափառ Եկեղեցու ԱՄՆ մետրոպոլիտ Գերասիմոսի ներկայացուցիչ Անթիմոս եպիսկոպոսի: Մենք Մեր ջերմ գնահատանքի խոսքն ենք բերում իրեն և իր միջոցով մետրոպոլիտ Գերասիմոսին. իր՝ մեզ հղած նամակի և այդ նամակում արտահայտված եղբայրական ջերմ զգացումների և բարեմաղթանքի համար: Թող Տերը պահի ու պահպանի և առավել զորացնի եղբայրությունը մեր քույր Եկեղեցիների, որպեսզի համատեղ ջանքերով մենք կարողանանք համարժեք պատասխաններ գտնել մեր կյանքի ներկա մարտահրավերներին:

Մենք Մեր սրտի ջերմ զգացումով ողջունում ենք այստեղ նաև ներկայությունը Եպիսկոպոսական Եկեղեցու ներկայացուցչի: Մենք ուրախ ենք նաև, որ այսօր այստեղ մեզ հետ է Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչը: Մենք ողջունում ենք նաև այստեղ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցչին՝ Արժանապատիվ Տեր Հորը:

Մեզ համար հոգեկան մեծ մխիթարություն և ուրախություն է այստեղ Մեր կողքին ունենալ նաև Տաթև արքեպիսկոպոս Սարգիսյանին, որ տարիներից ի վեր բնակվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և իր նվիրյալ ծառայությունը մատուցում մեր նվիրական Սուրբ Աթոռին: Մենք վայելում ենք իր անմնացորդ նվիրումը և ծառայասիրության ոգին, խոնարհ, համեստ՝ Տիրոջ Եկեղեցու նվիրյալ բարեջան սպասավոր: Մենք բարձրորեն գնահատում ենք Սրբազան Հոր բերած օգտակարությունը Մայր Աթոռի աշխատանքներին: Թող Աստված օրհնի մեր սիրելի Սրբազանին և պարգևի նրան կյանքի արևշատ օրեր:

Այսօր առանձնակի ուրախություն ունեմ իմ գնահատանքի խոսքը ուղղելու ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի հոգևոր սպասավորներին, մասնավորապես այս պարածաշրջանում հավատավոր Մեր զավակներին իրենց ծառայությունը բերող Արժանապատիվ Տեր Հայրերին՝ Տեր Սարգիս քահանային, Տեր Տաթև քահանային, ինչպես նաև Տեր Եղիա և Տեր Մեսրոպ քահանաներին:

Մեր սրտի ջերմ խոսքը և բարձր գնահատանքը ցանկանում ենք արտահայտել նաև հովվապետական Մեր երկրորդ այցի համար մասնավոր կերպով ստեղծված հանձնախմբի անդամներին՝ իրենց ջանադիր ու նվիրյալ աշխատանքի համար, ի մասնավորի հանձնախմբի ատենապետ Ռոզ Ջորջորյանին, և այստեղ առանձնահատուկ կերպով կուզեմ նաև գնահատանքի խոսք ուղղել մեր սիրելի Չարլզ Թահթայանին, որի հետ յուրաքանչյուր հանդիպում Մեր սիրտը լցնում է ուրախությամբ և ջերմությամբ, որովհետև հանձին նրա՝ տեսնում ենք օրինակելի, նվիրյալ և ծառայասեր հայորդուն: Մենք ցանկանում ենք Մեր գնահատանքի խոսքն ուղղել նաև այս երեկոն կազմակերպող հանձնախմբի անդամներին, ի դեմս այս երեկոյի պատասխանատու ատենապետ Արշակ Մուրադյանի:

Մենք ցանկանում ենք Մեր խոսքն ավարտել՝ Մեր գնահատանքը բերելով ձեր թեմի նվիրյալ առաջնորդին՝ Հովնան արքեպս. Տերտերյանին: Այս պասնինն օրերի ընթացքին Հովնան Սրբազանը ներկայացրեց իր եկեղեցասեր, Էջմիածնասեր, հայրենանվեր ոգին: Մենք տեսանք ու հաստատեցինք, վկան եղանք այն նվիրյալ աշխատանքի, որ Սրբազան Հայրը իրականացրել է իր առաջնորդության այս անցնող տարիների ընթացքում: Մեր սիրտը անհունորեն մխիթարվեց, և լավատեսությամբ Մենք Մեր հայացքն ուղղեցինք դեպի ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի վաղվա օրը: Մենք հավատում ենք, որ հաղթանակները պիտի միմյանց հաջորդեն Տիրախնամ ձեր թեմի կյանքից ներս, և աստվածային օրհնությունը պիտի բազմապատիկ իջնի ձեր կյանքից ներս՝ ձեզ պարգևելով ուրախություն և նոր լավատեսություն դեպի ձեր գալիք օրերը:

Թող Տերը պահի ու պահպանի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր թեմերով, իր թեմական ու համայնքային, վարչական կառույցներով, հոգևոր սպասավորներով, առաջնորդներով, նվիրյալ ու հավատավոր մեր ժողովրդով, որ ապրել է իր կյանքի բոլոր ընթացքին՝ և՛ ուրախության պահերին, և՛ դժվարին ժամանակներում ապավինած Աստծուն, ապավինած իր հայրերի նվիրական սուրբ հավատքին, միշտ հավատ ու վստահություն փածելով դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և այնտեղից եկող հոգևոր առաջնորդությունը, և Աստված բազմապատիկ վարձատրել է մեր ժողովրդին իր հավատարմության համար, վարձատրել է, որովհետև մեր ժողովուրդը եղել է հարազատ ազգ Աստծո և միշտ հավատացել, որ ինքը ապավինելով Աստծուն՝ երբե՛ք ամոթով չպետք է մնա, ինչպես յուրաքանչյուր հավատացող մեր Փրկչին ու մեր Տիրոջը: Թող Տերը զորավոր պահի հայորդու հավատը և նրա քայլերը անշեղորեն, անսայթաք, հաստատուն կերպով առաջնորդի դեպի նոր, պայծառ ժամանակները մեր կյանքի: Աստված թող օրհնի ձեզ, պահի-պահպանի Իր սիրո, Իր շնորհի և խաղաղության մեջ: Ամեն:

**19 հունիսի**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ և անմահ Պատարագ մատուցեց Կուպերտինոյի Ս. Անդրեաս հայկական եկեղեցում, որը Վեհափառ Հայրապետի՝ ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ հովվապետական այցի վերջին հանգրվանն էր: Պատարագի սրբազան արարողությանը մասնակցում էին Սան Ֆրանցիսկոյի Ս. Հովհաննես, Կուպերտինոյի Ս. Անդրեաս, Օկլենդի Ս. Վարդան, Սակրամենտոյի Ս. Հակոբ հայկական եկեղեցիների համայնքների և ծխական խորհուրդների անդամները:

Պատարագի ընթացքում առաջնորդ Սրբազան Հայրը մեկ անգամ ևս դիմեց հավատացյալներին՝ ուրախություն հայտնելով Նորին Սրբության Հովվապետական այցի առիթով, որ հոգևոր բերկրանք է պարգևում հավատացյալներին և առավել ամրապնդում իրենց կապը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ. *«Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, բոլորիս սրտերը ուրախ են, որ այսօր այս սուրբ եկեղեցվո կամարներու ներքո Հայրապետական Սուրբ Պատարագ կմատուցվի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն Ձեզի, սիրելի բարեպաշտ հավատացյալներ, կբերե մեր հայրերու հավատքեն ճառագայթում մը, որպեսզի հավատքի ձեր կյանքը նոր եռանդով, նոր խանդավառությամբ և նոր հանձնառությամբ շարունակեք ի խնդիր Աստուծո փառքին և մեր Սուրբ եկեղեցվո առավել պայծառացմանը:*

*Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, ահավասիկ այսօր տասնիններորդ օրն է, որ Հայոց Հայրապետը հովվապետական իր երկրորդ այցելությամբ կգտնվի Արևմտյան թեմեն ներս: Տասնինն օրեր շարունակ Վեհափառ Հայրապետը իր պատգամները հղեց հավատավոր մեր ժողովուրդին, իր օրհնաբեր ներկայությամբ կնքեց նոր առաքելություններ թեմական մեր կյանքեն ներս, խրախուսեց մեր ժողովուրդի զավակները նոր մարտահրավերներով, և անտարակույս Հայոց Հայրապետին ներկայությամբ նոր արթնություն մը կսկսի մեր ժողովուրդի հոգևոր և հավատքի կյանքին մեջ, երբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Վեհափառ Հայրապետի անձին ընդմեջեն ձեր կյանքի մեջ նոր լիցք կդառնա, նոր տեսիլք կդառնա, որպեսզի հավատարմության նոր զգացողությամբ շարունակեք դուք այս հեռավոր ափերում ապրիլ մեր հայրերու հավատքով:*

*Տասնինն օրեր շարունակ Լոս Անջելեսեն սկսած, այնուհետև Ֆրեզնո, Սակրամենտո, Արիզոնա և վերջապես այս շրջանի ծովածոցի մեր ժողովուրդի զավակները ապրեցան ուրախության և տոնական օրեր, և մեր սրտագին մաղթանքն ու աղոթքն է, որ Հայոց Հայրապետը զորացած ձեր բոլորի աղոթքներով, բարի մաղթանքներով, ջերմ սիրով և հարգանքը վայելելով ձեր բոլորին, վերադառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Աստուծո կամքով առավել խանդավառելու համար հայրենիքի մեջ ապրող մեր ժողովուրդի զավակները, որոնք ակնդետ կնային ձեզ այն սպասումով և ակնկալությամբ, որ դուք պիտի շարունակեք պայքարիլ, մաքառիլ և մերժիլ բոլոր տեսակի դժվարություններ և խոչընդոտներ»:*

Այնուհետև հավատացյալներին իր Հայրական պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը փառք վերառաքեց առ Աստված Հովվապետական իր այցի հաջող ընթացքի համար, ապա իր գնահատանքն ու գոհությունը հայտնեց թեմակալ

առաջնորդին, եկեղեցականներին և կազմակերպիչ հանձնախմբին՝ գործադրած անձնվեր ջանքերի համար: Վեհափառ Հայրապետը հորդորեց հայորդիներին՝ շարունակել իրենց կյանքը աննկուն նվիրումով առ Հայաստանյայց Ս. Եկեղեցին և իրենց թեմը: Հայրերի օրվա տոնի առիթով Նորին Սրբությունը իր շնորհավորանքները հղեց բոլոր հայրերին՝ կոչ անելով ամուր պահել ու պահպանել իրենց հավատը՝ երեխաների մեջ սերմանելով Աստծո երկյուղը և Հայոց Եկեղեցու վարդապետությունը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՈՒՊԵՐՏԻՆՈՅԻ Ս. ԱՆԴՐԵԱՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

*«Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ»:*

**«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:**

**Սիրելի բարեպաշտ հավատացյալներ, սիրելի հայորդիք, ահա հովվապետական Մեր երկրորդ այցը մոտենում է իր ավարտին: Վերջին հանգրվանը Մեր այցելության Սան Ֆրանցիսկոն է և հարակից քաղաքները: Այսօր Մենք գոհություն և փառք ենք մատուցում, որ Մեր զավակների հետ հրաժեշտից առաջ Մեր աղոթքն ենք բարձրացնում Կուպերտինո քաղաքում, Ս. Անդրեաս եկեղեցու մեջ:**

**Մենք փառք և գոհություն ենք բարձրացնում, որ այսօր Միացյալ Նահանգներում ապրվածասեր ժողովուրդը տոնում է հայրերին նվիրված մի տոն: Այս տոնի առիթով Մենք Մեր շնորհավորանքը, Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում բոլոր հայրերին, որպեսզի նրանք ապրեն իրենց կյանքը խնդությամբ լեցուն, տեսնեն իրենց զավակաց բարի ընթացքը ու ցնծան և ուրախանան և փառք տան Աստծուն, որ Աստված Իր ողորմության շնորհի ներքո պահում-պահպանում է ազգս հայոց, պահում-պահպանում է հայորդյաց՝ նրանց առաջնորդելով դեպի բարին և դեպի սերը:**

**Այսօր՝ հայրերի այս տոնի խնդալի օրը, Մենք աղոթքով հիշում ենք նաև մեր նախահայրերին, ովքեր հավատարիմ զավակները եղան մեր Երկնավոր Տիրոջ: Նրանք իրենց հոգուց ներս ընդունեցին Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզության բարի հունդերը ու իրենց հավատքով աճեցրին իրենց հոգիներից ներս ցանված այդ հունդերը, որոնք առատ ու բարի հունձ տվեցին, և, ինչպես գիտեք, 301 թվականին մեր հայրերը քրիստոնեական հավատքը հռչակեցին որպես պետական կրոն՝ ողջ աշխարհում լինելով առաջին քրիստոնյա ազգը:**

**Նրանք ցնծությամբ ու բերկրանքով իրենց Հայրապետի «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» հորդորին ու պատգամին ընդառաջ կառուցեցին նաև պատմական մեր հայրենի հողի վրա, Վաղարշապատ քաղաքի մեջ նվիրական մեր սրբավայրը, մեր հավատքի սուրբ կենտրոն Ս. Էջմիածինը, որտեղից 1700 տարիներ շարունակ լույս ճառագեց ազգիս հայոց, լուսավորեց նրանց կյանքի ընթացքը, հա-**

վարքով շաղախեց հայի կյանքը ի սփյուռս աշխարհի, պահեց-պահպանեց մեր ժողովրդին հավատքով զորացյալ նրանց ընթացքը միշտ առաջնորդելով դեպի Աստված:

Ահա, սիրելիներ, այսօր Մենք, որպես 132-րդ Հայրապետ, եկել ենք մեր նվիրական այս սուրբ կենտրոնից, եկել ենք այցի Մեր հավատավոր զավակներին, որ կայք են հաստատել Միացյալ Նահանգների Արևմտյան ափում: Եկել ենք բերելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սեր և օրհնություն ձեզ, եկել ենք պատգամ ու հորդոր բերելու ձեզ, եկել ենք ձեզ խանդավառելու և միաժամանակ ձեզնով խանդավառվելու: Տասնհինն օրեր անցան, բազում առիթներ ունեցանք հաստատել մեր ժողովրդի զավակաց հետ աղոթելու, ուրախանալու, խնդալու, բայց նաև առիթներ ունեցանք և՛ հուսախաբության, և՛ փրփմության:

Ուրախացանք, երբ տեսանք վերարթնության ու վերազարթոնքի մեջ մեր ժողովրդի կյանքը, երբ տեսանք մեր եկեղեցիները լեցուն Մեր հավատավոր զավակներով: Տխրեցինք, երբ տեսանք մեր ժողովրդի զավակաց անտարբերությունը հանդեպ իրենց հայրերի սրբազան հավատքը: Տրտմեցինք, երբ տեսանք, որ հայ մանուկները չեն հասկանում հայոց լեզուն, և դպրոցներ չկան, ուր Մեր զավակունք կարողանան կրթվել, դաստիարակվել ազգային շնչով, քրիստոնեական մեր հավատքով: Տրտմեցինք, երբ տեսանք մեր եկեղեցիները դատարկ, աղոթող հայորդիներից զուրկ:

Այո, սիրելի հավատացյալներ, այս տասնհինն օրերի ընթացքին Մենք հաստատեցինք, որ բազում աշխատանք ունենք իրականացնելու, բազում աշխատանք, որպեսզի հարատև լինի հայոց կյանքը Արևմտյան ափերում Խաղաղականի, բայց Մենք մշտապես Մեր հոգում աղոթք բարձրացրեցինք առ Աստված, փառք և գոհություն մատուցեցինք Երկնավորին՝ ասելով. «Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ»:

Փառք Քեզ, Աստված, որովհետև այդ մի բուռ հայորդյաց հոգիներում, փոքր մի ածու քո հոտի սրտերում պահում ես կենդանի հավատքը մեր սուրբ հայրերի: Կենդանի և աշխույժ ես պահում և հայ կյանքը նրանց հոգիներից ներս ու նախանձախնդրության հոգին, և Մենք հավատում ենք, որ հավատքի այդ հունդերը, հավատքի այդ սերմերը, որոնք առկա են Մեր զավակաց հոգիներից ներս, պիտի աճեն, պիտի ուռճանան, թթխմոր պիտի դառնան և պիտի շաղախեն ամբողջ հայության կյանքը Խաղաղականի այս ափերին, ու Մենք մշտապես պիտի ցնծանք ու ուրախանանք ամեն առիթով: Հայրապետներ պիտի այցելեն և պիտի տեսնեն ձեր կյանքը շեն ու բարգավաճ, և նորից փառք պիտի բարձրացնեն Երկնավորին, փառք պիտի տան, որ Աստված ողորմած ու բարեգութ է և Իր օրհնությունն է առատորեն հեղում մեր ժողովրդի կյանքից ներս:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, Մենք վերադառնալու ենք Մայր Հայաստան մխիթարված սրտով, որովհետև տեսանք վերածնության ոգին Արևմտյան թեմից ներս, տեսանք այն ջանադիր աշխատանքը, որ իրականացվում է թեմական և վարչական խորհուրդների կողմից, տեսանք այն աշխատանքը, որ իրականացվում է մեր եկեղեցական սպասավորների կողմից: Մենք ուրախացանք՝ հանդիպելով նոր սե-

ընդի ներկայացուցիչների հետ, երիտասարդ հայորդյաց հետ: Մխիթարվեցինք
նրանց հայրենասիրության բարձր գիտակցությամբ, մխիթարվեցինք՝ հաղորդ
դառնալով նրանց եկեղեցասեր զգացումներին: Մենք Աստված փառաբանեցինք
ամեն առիթով, երբ հանդիպեցինք Մեր սիրելի հայորդիներին, ովքեր դպրոցական
սեղանների ետև մեսրոպյան սքանչելի բառն ու բանն են սովորում, Հայոց գրերով
իրենց մտածումները, իրենց զգացումները փոխանցում ձեզ և հոգևոր առաջնորդներին:
Մենք այս պահին Մեր գնահատանքն ենք բերում Արևմտյան թեմի սիրեցյալ
առաջնորդին՝ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին, որը անմնացորդ սիրով ու
նվիրումով լծված է Մեր բարեպաշտ զավակների սպասավորությանց ազնիվ գոր-
ծին, խանդավառում է նրանց նոր իրագործումներով, հրաբորբ պահում հոգիներում
Մեր զավակների սերը Հայրենիքի և սերը Սուրբ Էջմիածնի, ձեռնարկում հայրենա-
շինական գործեր Արևմտյան թեմի տարածքից ներս և հիմնում նոր դպրոցներ, օրհ-
նում հիմերը մշակութային և հայրենակցական սրահների, կառուցում եկեղեցիներ,
ուր մեր ժողովրդի զավակունք պիտի համախմբվեն և միաբան ու միասնական շա-
րունակեն իրենց ընթացքը նոր ժամանակներին ընդառաջ, ուր մեր ժողովրդի զա-
վակունք պիտի հաղորդակցվեն իրենց հայրերի նվիրական հոգուն և պիտի վերա-
նորոգեն իրենց ուխտը հավատարմությամբ դեպի նորանկախ Հայրենին հայոց և
միածնաէջ Սուրբ Էջմիածինը:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, Աստված բազում շնորհներ է հեղում մեր կյան-
քից ներս: Այս տարի նույնպես մենք ունենք պարգև աստվածային՝ տոնախմբելու
Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակը, ինչպես նաև ոգեկոչելու 90-ամյակը Հայոց ցե-
ղասպանության: Երկու նվիրական առիթներ, որպեսզի մենք վերանորոգենք ինք-
ներս մեզ, որպեսզի այդ խորհուրդների, այդ տոների՝ 1600-ամյակի հիշատակութ-
յան և 90-ամյակի ոգեկոչման խորհուրդներով կառուցենք մեր կյանքը ինչպես այս-
տեղ, այնպես նաև մեր պատմական հայրենի աշխարհում, որպեսզի երջանիկ ապրի
հայորդին, որպեսզի հույսով ու հավատով նայի դեպի նոր գալիքը իր կյանքի և զո-
րանա, զորանա ու առավել զորանա քրիստոնեական իր սուրբ հավատքով և հավա-
տա, որ իր ընթացքը անվախճան է, որ իր ընթացքը հավերժական է, որովհետև ին-
քը քայլում է Աստուծո հետ, որովհետև իր կյանքը օրհնվում է Աստծո կողմից իր բա-
րի գործոց մեջ, իր բարի կյանքի ընթացքի մեջ:

Ահա, սիրելիներ, մնացեք հաստատուն ձեր հավատքի մեջ, մնացեք անսասան
ձեր սիրո մեջ և մնացեք միշտ նվիրյալներ հայ կրթության և հայոց նվիրական հի-
շատակներին: Մնացեք նաև ձեր հոգևոր սպասավորների հորդորներին ու պատ-
գամներին ունկնդիր, որովհետև նրանք տքնում են, նրանք աշխատում են, որպեսզի
շեն ու բարգավաճ լինի ձեր կյանքը՝ ազգային, կրթական ու մշակութային, որպեսզի
շեն, բարգավաճ ու պայծառ մնա հոգևոր կյանքը ձեր պայծառաշուք եկեղեցիներով,
հավատքի մեր տներով ու օջախներով, և Աստված, որ պիտի տեսնի միաբանությու-
նը մեր, պիտի առավել ևս օրհնի մեզ, հայ կյանքը ի սփյուռս աշխարհի:



ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ




ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՋԻՄԻ ՔԱՐՏԵՐԻ (ԱՋԻՑ), ՄԱՍՔՈ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌԻՉԱՐԴ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ, Տ. ՎԻԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՔԱԶՅԱՆԻ ԵՎ. Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՀԵՏ ՀԱԲԻԹԱԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ս. Դատարանցից հետո տեղի ունեցավ ընդունելություն, ապա ի պատիվ Վեհափառ Հայրապետի հյուրասիրություն կազմակերպեցին տեր և տիկին Վահե Սարգսյանները:

Նույն օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով մեկնեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմ, Դետրոյտ:

**20 հունիսի**

Առավոտյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը Ռիչարդ Մանուկյանի անձնական ինքնաթիռով մեկնեց Դետրոյտ՝ մասնակցելու Habitat for Humanity ծրագրի շրջանակում անապահով խավերի համար նախատեսված տների կառուցման ծրագրին:

Դետրոյտի օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորելու էին եկել ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը, թեմական խորհրդի և թեմական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, MASCO ընկերության նախագահ Ռիչարդ Մանուկյանը: Նորին Սրբությանը այստեղ բարիգալստյան խոսքով դիմեցին Խաժակ Սրբազանը և Ռիչարդ Մանուկյանը: Հավաքվածներին գնահատանքի իր խոսքը ուղղեց Վեհափառ Հայրապետը:

**21 հունիսի**

Առավոտյան ընդունելություն և հյուրընկալություն էր կազմակերպվել MASCO ընկերությունում, ուր Նորին Սրբությանը իր գլխավորած կազմակերպության և Մանուկյան ընտանիքի կողմից ողջունեց Ռիչարդ Մանուկյանը:

Հանդիպման ընթացքում ներկայացվեց Հաբիթաթի գործունեությունը: Այս կազմակերպության՝ Հայաստանում իրականացվող ծրագրերի մասին խոսեց Հաբիթաթի Հայաստանյան գրասենյակի պատասխանատու Աշոտ Եղիազարյանը՝ նշելով, որ այս կազմակերպությունը Հայաստանում արդեն կառուցել է 100 տուն և ծրագրվում է մինչև տարեվերջ կառուցվող տների թիվը հասցնել 122-ի:

Հանդիպման վերջում խոսք ասաց Վեհափառ Հայրապետը՝ բարձրորեն գնահատելով Մանուկյան ընտանիքի նպաստը մեր ազգային-եկեղեցական կյանքին: Նորին Սրբությունը կարևորեց նաև Հաբիթաթի գործունեությունը, որը թեթևացնում է բազմահազար ընտանիքների հոգսերը՝ նրանց պարգևելով սեփական կացարան:

Այս հանդիպումից հետո տեղի ունեցավ մամուլի ասուլիս, ուր Նորին Սրբությունը ներկայացրեց Դետրոյտ գալու նպատակը՝ Հաբիթաթի տնաշինական ծրագրերին մասնակցելու համար, իր գնահատանքը հայտնելով ՄԱՍՔՕ ընկերությանը Հաբիթաթին բերած նպաստի համար:

Անհրաժեշտ է նշել, որ Ռիչարդ Մանուկյանը հունիսի 22-ը իր գլխավորած ընկերությունում հայտարարել էր ոչ աշխատանքային օր, որպեսզի այն աշխատակիցները, ովքեր ցանկանում էին հաջորդ օրը իրենց մասնակցությունը բերել ընթացող շինարարությանը, կարողանային աշխատել այնտեղ:

Օրվա երկրորդ կեսին Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Դետրոյտի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի:

Եկեղեցում Նորին Սրբությանը բարիգալստյան խոսք ասաց Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը՝ շեշտելով, որ Վեհափառ Հայրապետը իր ամեն այցելությամբ և ներկայությամբ Սփյուռքի հայության հոգում և սրտում վերարծարծելով հայության ոգեկանությունը և խանդավառելով ներկայով ու ներշնչելով ապագայով, մեզ հիշեցնում է մեր ինքնությունը, մեր ակունքները, մեր Եկեղեցու առաքելականությունը, մեր հերոսական անցյալը, և որ մենք բոլորս զավակներն ենք Սուրբ Էջմիածնի:

Հավաքվածներին այնուհետև իր պատգամը ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ասելով, որ, հովվապետական երկրորդ այցով ԱՄՆ հայոց Արևելյան թեմում լինելով քսան օրեր շարունակ, աղոթեց այստեղի հայորդյաց հետ՝ օրհնելով նրանց ընթացքը և ուրախությունն ունեցավ կատարելու եկեղեցիների հիմնարկեքներ ու օրհնությունը մշակութային կենտրոնների և դպրոցների: Շարունակելով խոսքը Վեհափառ Հայրապետն ասաց, որ հայրապետական իր այս այցելության ավարտին եկել է Արևելյան թեմ, որ իր մասնակցությունը բերի Հաբիթաթի այն ծրագրին, որի նպատակն է կացարաններով ապահովել կարիքավոր ընտանիքներին՝ շեշտելով, որ համատեղ գործակցությամբ միայն հնարավոր է դիմագրավել այսօր աշխարհին ալեկոծող վտանգներին:

Նորին Սրբությունը բարձր գնահատելով ամերիկահայության բերած կարևոր նպաստը հայրենաշինության գործին, ի գնահատություն ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի գործունեության, Սրբազան Հորը նվիրեց Սրբալույս Մյուռոնի մի սափոր՝ ասելով. «Այստեղ պահվում է Մյուռոնը, որով դրոշմվում է հավատարմության ընթացքը և ասպվածսիրությունը յուրաքանչյուր հայորդու»: Հայոց Հայրապետը հավաքվածներին պատգամեց հավատարիմ մնալ Ս. Մյուռոնի խորհրդին ու Մյուռոնով բաշխվող շնորհներին:

Նորին Սրբությունը, ի գնահատություն Ս. Հովհաննես Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Կարապետ քհն. Գոչակյանի հոգևոր ծառայության, Արժանապատիվ Տեր Հորը նվիրեց մի ձեռաց խաչ: Եկեղեցու ծխական համայնքի կողմից Հայկ Քորքորյանը Վեհափառ Հայրապետին նվիրեց Տերունական պատկերների շարքը ներկայացնող մի սրբանկար:

Այնուհետև եկեղեցուն կից սրահում տեղի ունեցավ ընդունելություն:

Հաջորդ օրը, առավոտյան, Վեհափառ Հայրապետը և հայրապետական շքախմբի անդամները մասնակցեցին Դետրոյտի արվարձաններից մեկում անապահով ընտանիքների համար Հաբիթաթի կողմից կառուցվող թաղամասի շինարարության աշխատանքներին: Այս ձեռնարկմանը իրենց մասնակցությունը բերեցին նաև ԱՄՆ նախկին նախագահ Ջիմի Քարտերը, Միչիգանի նահանգապետը և Դետրոյտի քաղաքապետը:

Այստեղ Նորին Սրբությունը առանձին մի հանդիպում ունեցավ ԱՄՆ նախկին նախագահի հետ: Զրույցի ընթացքում քննարկվեցին աշխարհին հուզող և մտահոգող մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման գործում կարևորվեց հոգևորական ու հասարակական-մշակութային գործիչների դերը և մասնակցությունը:

Ավարտելով հովվապետական իր այս երկրորդ այցելությունը ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հունիսի 23-ին վերադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

*ՎԱՐԴԱՆ ՄԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՌՄՅԱՆ*